№ 163 ԿԻՐԱԿԻ ՅՈՒԼԻՍԻ 30

1906

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ ՅՈՒԼԻՍԻ 30 № 163

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի. առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊԷԿՈՎ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարվում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Բագուի հայոց եկեղեցական-ծխական դպրոցների համար

ՀՐԱՒԻՐՎՈՒՄ ԵՆ

1) Օրիորդաց դպրոցի համար աւագ ուսուցչուհի՝ շաբաթական 12 դասով և աւագութեան համար 500 ր. վարձատրութիւն: Ցանկալի է, որ խնդրատու թեկնածուն բարձրագոյն մանկավարժական կրթութիւն ստացած և վարչական փորձառութիւն ունեցող անձնաւորութիւն լինի:

2) Երկու ուսուցիչ երգեցողութեան դասերի համար, իւրաքանչիւրը շաբաթական 16—18 դասով: Երգեցողութեան ուսուցիչները մասնագէտ երաժիշտներ պիտի լինեն, որոնցից մէկը նաև քառաձայն երգեցիկ խումբ կազմելու և ղեկավարելու հմտութիւն պիտի ունենայ, որի համար առանձին վարձատրութիւն կը ստանայ:

3) Տղայոց դպրոցի համար մի մասնագէտ նկարչութեան ուսուցիչ՝ շաբաթական մինչև 18 դասով:

Դասագինն է՝ մինչև 12 դաս 75-ական ռուբլի, իսկ 12-ից վեր իւրաքանչիւր դասը 50-ական ռուբլի:

Ցանկացողները թող բարեհաճեն դիմել հոգաբարձութեան մինչև օգոստոսի 20-ը, ներկայացնելով իրանց կրթական ցենզի և անցեալ գործունէութեան մասին համառօտ տեղեկագիր, հասցէ. Баку, Приходскому попечительству Бакинскихъ церквей:

առ. 3—3

Նատալիա Վարլամովնա և Տիգրան Միքայէլեան Շադինեանցները, Վարվառա Միքայէլեան Նազարեանը, Աննա Միքայէլեան Բաղդասարեանը և Նազար Յովհաննիսեան Նազարեանը ցաւօք սրտի յայտնում են ազգականներին և ծանօթներին առաջինը իր թանկագին որդու, 2-րդի, 3-րդի և 4-րդի թանկագին եղբօր և վերջինը իր աներորդի Թիֆլիսի պատուաւոր քաղաքացի՝

ԵԱԳՈՐ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ ՇԱԴԻՆԵԱՆՑԻ

մահը: Հոգեհանգիստը այսօր, յուլիսի 29-ին, երեկոյեան ժամը 7-ին: Յուղարկաւորութիւնը, կիրակի, յուլիսի 30-ին, առաւօտեան ժամը 10-ին, իր բնակարանից (Աբաս-Աբադսկի տուպիկ № 9 սեփ. տուն) դէպի Մողնու ս. Գէորգ եկեղեցին: Թաղումը Վերայի գերեզմանատանը:

(շ. կ.) 2—2

ՋԳՐԱՇԷՆԻ

ս. Աւետեաց եկեղեցու ծխական դպրոցների հոգաբարձութիւնը սրանով յայտնում է ի գիտութիւն խնդրատու

ՎԱՐԺՈՒՀԻՆԵՐԻ և ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ,

որ ուսուցչական խումբը 1906/7 ուսումնական տարվայ համար կազմված է և հաստատված, իսկ այն խնդրատուները, որոնք հրաւէր չեն ստացել հոգաբարձութիւնից, ազատ են:

ՀՐԱՒԷՐ

Ջգրաշէնի ս. Աստուածածին եկեղեցու մեծարգոյ երկսեռ ծխականները (21 տարեկանից վեր) երկրորդ անգամ հրաւիրվում են ժողովի նոյն եկեղեցին յուլիսի 30-ին, կիրակի առաւօտեան ճիշտ 11 ժամին, զբաղվելու Ջգրաշէնի երկսեռ դպրոցների հարցով և ընտրելու երեք պատուիրակ ռուսահայոց կենտրոնական ժողովի համար չորս պատգամաւորների ընտրութեանը մասնակցելու:

Այս ժողովը վաւերական կը համարվի անկախ ներկայ եղող ծխականների թւից:

Առանձին հրաւիրաթերթեր չեն ուղարկվելու:

Ջգրաշէնի ս. Աստուածածին եկեղեցու՝
Գէորգ ա. ք. Աբուլեան
Երէցփոխ՝ Ալէք. Քալանթարեան

առ. (շ. կ.) 2—2

ՅՈՎՍԷՓ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ

Ելիզաւետինսկայա, 40.

Ընդունելութիւնը և պարապմունքները ամբողջ տարի. (ա.օ.) առ. 2—6

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

„ԽԱԹԱԲԱԼԱ“

Երգիծական-սատիրական շաբաթաթերթի բաժանորդագրութիւնը

Տարեկան գինն է Թիֆլիսում 4 ր., գաւառը՝ 5 ր., 1/2 տարվայ գինն է Թիֆլիսում 2 ր., գաւառը՝ 2 ր. 50 կ., երեք ամսվանը 1 ր., գաւառը՝ 1 ր. 25 կ.:

Ծ ա ն.—Սկզբում, մտադրվելով «Խաթաբալան» երկու շաբաթը մի անգամ լոյս ընծայել, տարեկան գինը որոշել էինք 2 ր. և 2 ր. 50 կ.: Բայց այժմ, քանի որ այն շաբաթաթերթ դարձրինք, այդ պատճառով էլ գինը կրկնապատկում ենք:

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, редакція «Хатабала».

Վաճառվում է գաւառական բոլոր հայաշատ քաղաքներում:

Շաբաթ, յուլիսի 29-ին, լոյս տեսաւ № 8.

Խմբագիր-հրատարակող՝ Աստ. Երիցեան

(ու. կ.) առ. 2—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պէտք է կազմակերպել. Վերջին տեղեկութիւններ. Աղէտից յետոյ. Դարձեալ արիւն. Հրաման կովկասեան զինուորական շրջանին. Պաշտօնական. Ընտրութիւնների շուրջը. Մամուլ. Իմ պատասխանը «Ալիքին». Անվերջ պատմութիւն. Տրամնջները բարձրանում են. «Պարլամենտական» կոչված ընտրութիւնները. Գանձակի շրջանում. Ուսուցիչը չը կեղծէ. Հերցենշտէյնի յիշատակին. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ.—Նկարիչ Մախոխեանի նկարը. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՊԷՏՔ Է ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ

I

«Մշակի» մէջ մենք զետեղեցինք մի շարք յօդուածներ *) «Հողային խնդիրներ» անունով, որոնց մէջ շօշափեցինք հողային խնդիրներին վերաբերեալ թէ ընդհանուր և թէ յատկապէս կովկասեան մի շարք հարցեր:

Այդ յօդուածների առիթով մեզ դիմեցին զանազան տեղերից լրացուցիչ ցուցումներ ստանալու կամ իրանց ուրիշ տեղական տարակուսանքները պարզելու:

Գործնական կեանքը հայէս է բերում զանազան հարցեր, որոնք կարօտ են մշակութեան և նպատակայարմար լուծման:

Այդ հարցերը վերաբերում են թէ գիւղական հողային կարգերին, թէ կալուածատիրական կապալահողերին, թէ պետական ազատ հողերին, անտառներին, թալաններին և թէ միջագիւղային յարաբերութիւններին:

II

Թէև զանազան ժամանակներում փորձեր են արված ուսումնասիրելու մեր հողային հարցերը և կան աշխատութիւններ, որոնց մէջ պարզված են հողատիրութեան և հողի շահագործութեան վերաբերեալ որոշ կէտեր, այնուամենայնիւ մենք չունենք լիակատար տեսութիւններ կովկասեան հողատիրութեան և հողային կարգերի մասին:

Ինչպէս յայտնի է, սրանից քսան տարի առաջ, Տիխէեվի նախաձեռնութեամբ ուսումնասիրութեան ենթարկվեցին Անդրկովկասի պետական գիւղացիների հողային հարցերը: Ժողոված նիւթերը հրատարակվեցին նախ գաւառ-գաւառ, ապա, ենթարկվելով մասնագէտ անձերի քննութեան, լոյս տեսան իբրև ամփոփումներ և ընդհանուր բնորոշումներ, լուսաբանված իրաւաբանական գիւղատնտեսութեան և այլ տեսակէտներով:

Այնուհետև լոյս տեսան ստատիստիքական կոմիտէտի և գիւղատնտեսական ընկերութեան մի քանի լուրջ աշխատութիւններ և մի երկու մասնաւոր հրատարակութիւններ:

III

Եղած աշխատութիւնները սակայն չեն կարող լիովին գոհացնել մեզ: Նրանք տալիս են հետաքրքրական և կարևոր տեսութիւններ և տեղեկութիւններ մեր հողային հարցերի մասին, բայց ինքը երկիրը իր ընթացիկ կեանքով, իր հրապարակ բերած հարցերով պահանջում է, որ ուսումնասիրութեան դաշտը աւելի ընդարձակ և խոր մշակված լինէր, որ երկրի զանազան շրջանները իրանց բնորոշ գծերով աւելի լաւ պատկերացված լինէին և այնպիսի նիւթեր ժողոված լինէին, որոնք կարողանային հիմք ծառայել գործնական ցուցումներ մշակելու համար:

Անհրաժեշտ է ուսումնասիրութիւնները շարունակել և նրանց կազմակերպել ամուր գիտնական հիմքերի վրա, որոշ սիստեմի ենթարկելով թէ նիւթեր ժողովելու գործը Անդրկովկասի զանազան շրջաններում և թէ նիւթերի դասաւորութիւնը այն հիմնական պահանջների համաձայն, որոնք կարևոր են հողային խնդիրները բազմակողմանի ընդգրկելու համար:

IV

Այդպիսի ուսումնասիրութիւններ չեն կարող անել մասնաւոր անձեր: Եւ յամենայն դէպս դժուար է յոյս դնել կամաւորների վրա, որոնք կարող են երևան գալ կամ չը գալ:

Պէտք է գործին գլուխ կանգնի մի որ և է հիմնարկութիւն, մի որ և է կազմակերպութիւն, կամ մի քանի հաստատութիւններ միասին:

Օրինակ, եթէ կովկասեան գիւղատնտեսական ընկերութիւնը ինքը առանձին անկարող է մի այդպիսի գործ գլուխ բերել, այն ժամանակ կարելի է միացնել գործի իրականացման համար մի քանի հաստատութիւններ, ինչպէս օրինակ ստատիստիքական կոմիտէտը, աշխարհագրական ընկերութիւնը, վրաց ազնուականութեան կալուածական բանկը, պետական և հասարակական մի քանի հաստատութիւններ, այլ և քաղաքական կուսակցութիւնների բիւրօներ: Նախաձեռնութիւնը կարող է վերցնել գիւղատնտեսական ընկերութիւնը իր վրա:

Պէտք է դիմել գործի կազմակերպութեան:

Ա. Քալանթար

---

*) Տես «Մշակ» №№ 99, 100, 102, 104, 108, 110, 140, 141 և 150.

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Շուշի, 25 յուլիսի

Բնական է, որ Շուշու կոտորածը արձագանք պիտի տար և գիւղերին: Շեխեր, Սօս և Ճարտար գիւղերը նորից ենթարկվեցին թուրքերի յարձակման և աննշան վնասներով յետ մղեցին յարձակումները:

Ջէբրայիլը (Կարեագին) մինչև Շուշու վերջին ընդհարումները օրինակելի էր իր խաղաղութեամբ. հայ-թուրքական յարաբերութիւնները, երթևեկութիւնը, առևտուրը իրանց սովորական շաւղի վրա էին. բայց այդ ընդհարումները նրանց էս գծից հանեցին և ահա խլրտումներ են լսվում Առաքել, Ցոր, Բանազոր գիւղերում: Արաքսի ափերին թուրքական արշաւանքներն ու յարձակումները հանգստութիւն չեն տալիս այդ գիւղերին և ամբողջ գաւառին:

—

Շուշի, յուլիսի 26-ին

Լարված խաղաղութիւն է. այն՝ ինչ որ մինչև ամսիս 12-ն էր: Աւելացել է մի բան.—քաղաքում կեանքը միանգամայն կանգնած, լճացած է, դրսից հաց, շաքար և նաւթ չեն գալիս և գները օրեցօր բարձրանում են. ջուրը դեռ կտրված է. առևտուր չը կայ: Եւլախից եկած պաշարները բռնված են Աղդամում: Հեռագիրը դեռ երէկ բացվեց, իսկ պօստըն այսօր ստացվեց: Սա կեանք չէ, ապրուստ չէ, այլ դժոխք: Սրան վերջ չը կայ, մինչև քաղաքի խպառ քայքայվելը, մինչև ազգաբնակութեան բնաջնջ դառնալը:

Գիւղացու հունձը կանգնած է. նա հրացանը ձեռին միայն իր անձը, իր ընտանիքն է գիշեր ցերեկ պահպանում: Այսօր նրա ճը օրն է. նա դաշտային գործից քիթ սրբելու ժամանակ չը պիտի ճարէր, բայց դաշտը նրա երեսը տեսնելու շաբաթներով կարօտ է: Եւ այսպէս քայքայվում ենք անվերջ, վազում ենք դէպի սովի դուռը...

—

Մենք հաղորդեցինք, որ պարսից Շահի ծննդեան տարեդարձի օրը, պարսկահպատակ հայերը Թիֆլիսի ընդհանուր հիւպատոս Մուֆախխամ-Սուլթանի միջոցով շնորհաւորական և հաւատարիմ հպատակութեան հեռագիր ուղարկեցին Մուզաֆֆէր-Էդդին Շահին: Այժմ, հիւպատոս Մուֆախխամ-Սուլթանը ստացել է հետևեալ հեռագիրը.

«Յանձնարարութիւն է տրվում ձեզ արտայայտել կայսերական գոհունակութիւնը պարսկահպատակ հայերին»:

Մուշիր-Դօվլէ
(Արտաքին գործերի մինիստր)

ԱՂԷՏԻՑ ՅԵՏՈՅ

I

Ահա և փաստերը:

Վերջապէս ստացվեց Շուշու պօստը և մենք կարող ենք տալ մեր ընթերցողներին աւելի մանրամասն տեղեկութիւններ այնտեղ կատարված եղելութիւնների մասին, քան հնարաւորութիւն ունէինք անել, հիմնվելով միայն հեռագրական սղված հաղորդագրութիւնների վրա:

Մեր առաջ դրված է պատերազմական գործողութիւնների մի փոքրիկ նկարագրութիւն: Միմեանց դէմ դիրքեր գրաւած հայեր և թուրքեր կռւել են մի քանի օր, երբեմնակի ընդհատումներով:

Որքան անձնուիրութիւն, որքան քաջութիւն և հերոսութիւն, կապված սպանութիւնների, աւերի և հրդեհների հետ:

II

Ովքեր են թշնամիները, ովքեր են կռւողները:

Հարևանները, համաքաղաքացիները:

Ինչու, ինչ նպատակներ իրագործելու համար:

Այդ հարցին պատասխան տալ չէ կարող ոչ ոք:

Եւ դա է սարսափելին ու ողբերգականը:

Արիւնը հոսեց, մարդիկ զոհվեցին, տըները աւերվեցին և այրվեցին, որպէս զի յետոյ կռւող կողմերը միմեանց մօտենան և ասեն. «Այս բոլորը մի ընդհանուր թշուառութիւն է, աննպատակ մի գործ է թէ այս և թէ այն կողմի համար, որ դա վերջ ի վերջոյ մի պատուհաս է, որ թափվել է մեր երկրի վրա և շուտով չէ վերանում ոչ մի կերպ»:

Ш

—Մենք չենք ցանկանում յարձակվել, կոտորել և աւերել. բայց երբ ուրիշը յարձակվում, կոտորում և աւերում է, մենք պէտք է կարող լինենք դիմադրել նրան մեր բոլոր ոյժով և նոյն իսկ այնպէս պատժել նրան, որ յարձակվողը միւս անգամ հաճոյք չը զգայ կրկնել իր վայրենի փորձերը:

Այդ է այն ձևակերպութիւնը, որ իւրացրել է այժմ մեր ժողովուրդը և աշխատում է պատրաստ լինել անակնկալ յարձակումներին ազդեցիկ կերպով պատասխանելու և նրանց յետ տալու համար:

Այդ ինքնապաշտպանութիւնն է, որ այժմ դարձել է մեր ժողովրդի համար կենսական մի անհրաժեշտութիւն, մանաւանդ այնտեղ, ուր արագ գոյանում են ընդհարման առիթներ:

VI

Գութանին և արհեստին կպած մեր ժողովուրդը, որ միայն հալալ աշխատանքի մասին է հոգում, իրերի և հանգամանքների բերմունքով դրված է մի այնպիսի կացութեան մէջ, որ նա պէտք է պատրաստ լինի ամեն րոպէ դիմադրելու վայրենի յարձակումների և արշաւանքների դէմ:

Դա մի աղէտալի դրութիւն է, բայց դա իրականութեան փաստ է:

Եւ ահա ժողովուրդը ստիպված է մշտական արթնութեան մէջ պահել, իբրև մշտական պատերազմի մէջ:

Դա անսովոր, անկանոն և աննորմալ կեանք է, որը կը կաշկանդէ ազգի զարգացումը, եթէ կարճ միջոցում նա չը բարեփոխվի:

Նահատակների անձնուիրութիւնը և նրանց քաջագործութիւնները նպատակ ունեն տալ հաստատ խաղաղութիւն, որը միայն կարող է հնարաւորութիւն տալ առաջ մղելու ժողովրդական զարգացման գործը ընդարձակ կերպով:

Ա. Քալանթար

ԴԱՐՁԵԱԼ ԱՐԻՒՆ

Շուշի 12 յուլ., առաւօտեան 12 ժ.

Սկսվեց հրացանաձգութիւն...

Քաղաքը իրարանցման մէջ ընկաւ: Մարդիկ դէս ու դէն փախան, խանութները կողպեցին ու տուն վազեցին: Հինգ րոպէում բազարը դատարկվեց, ամայացաւ: Դիրքերում ոյժը մեծացաւ: Զօրքը իսկոյն գնաց: Գեներալը երկու կողմից էլ հրամայեց չարձակել՝ չեղաւ: Հայերը դադարեցին. զօրքն առաջ անցաւ, իսկ թուրքերը շարունակեցին...

Հայերը լսեցին գեներալին: Նա տեսաւ, համոզվեց և ստիպված եղաւ երկու զօրեղ դիրք բռնել զինուորական ոյժը կենտրոնացնել.—մէկը Գովհար-աղի տան հանդէպ, իսկ միւսը Ղուլմուղլի առաջ: Գովհար-աղի տնից սկսեցին զօրքի վրա անդուլ հրացանաձգութիւն: Թնդացիր թնդանօթը մի քանի անգամ գոռաց այդ տան վրա. թուրքերը տունը թողեցին ու փախան, բայց չը լռեցին, այլ պատասխանեցին թնդանօթին աւելի սաստիկ, որը տեղի տուաւ զօրքին աւելի ներգործական դեր կատարելու և ջարդ տալու թուրքերին ու վնասելու նրանց տներին: Երկրորդ ոյժը Ղուլմուղում սպայի հրամանով լռեցրեց հայերին, երկու հրացան խլեց նրանցից ու յետ դարձրեց, բայց թուրքերը զոռեցին և... երկու զինուոր զոհ գնաց սպայի անփորձութեան: Հայերն առաջ անցան, քշեցին թուրքերին մինչև Շահզադի տունը:

Երեկոյեան 3 ժամ

Գեներալն անձամբ գնաց դիրքերը և վերադարձաւ, յորդորելով հայերին դադարել... և անցաւ թուրքերի մէջ: Հրացանաձգութիւնը շարունակվում է նոր կարգով: Գնդակի սուլոցը խլացնում է օդը, խլացնում է և մարդուն: Սովորել, ընտելացել ենք, անցեալ տարվայ նման չի ազդում մեզ վրա: Առաջներում դիակներ են տանում, արիւնը կաթկթելով. ոչինչ՝ սրտապնդվել ենք: Էլ վաշվշոց, էլ լաց ու կոծ չը կայ անցեալ տարվայ նման...

Ինչի՞ց սկսվեց այս դժոխային կռիւը:

Այսօր առաւօտ վերին թաղի եկեղեցուց ցած, Ջալալեց տան մօտ, Սահակ անունով մի հայ են սպանել թուրքերը, պարտէզում քնած մի հայ. նախ խեղդել են նրան պարանով և ապա մորթել դաշոյնով: Դատական քննիչը, ոստիկանապետը և բժիշկը գնացել են քննութեան, իսկ հայերը գնացել են դիակը վերցնելու, յանկարծ թուրքերն սկսել են դիրքերից դրանց վրա գնդակ արձակել. մէկ-երկու համբերելուց յետոյ, պատասխանել են հայերը: Ահա այդտեղից է սկսվել կռիւը: Այդ վկայեցին և յիշեալ պաշտօնեաները: Սակայն կռւի իսկական պատճառը, ինչպէս հաւաստացնում են, հետևեալն է: Մի քանի օր սրանից առաջ բանտարկվեց Նաջաֆ-Կուլի Ջիւանշիրը իր յայտնի ոճրագործութիւնների համար: Այս դէպքը գրգռել է թուրք ամբոխին: Մի անգամ նրանք կամեցել են յարձակվել բանտի վրա և ազատել նրան, բայց Գոլոշչապովի պատասխանը յետ է կասեցրել նրանց այդ դիտաւորութիւնից: Իսկ երէկ քաղաքումս լուր տարածվեց, որ նրա համար հաց տանելու ժամանակ՝ հացի մէջ բռնել են մի նամակ այսպիսի բովանդակութեամբ.—մինչև հինգշաբթի օրը կամ քեզ պէտք է զօռով այդտեղից ազատենք, կամ պիտի կոտորվենք...:

Գոլոշչապովը թուրքերի թաղից վերադարձաւ և հետը բերաւ գաւառապետի դիւանատան ծառայող հայերին: Նա կպել է այնտեղ թուրքերին և հրամայել դադարեցնել կոտորածը այնպէս, ինչպէս սկսել են, թէ չէ ինքը պիտի գործէ թուրքերի դէմ, իբրև առաջին սկսողի: Թուրքերն իրանց սովորական երդումներով կամեցել են հաւատացնել նրան, որ նախայարձակը հայերն են եղել և ոչ թէ իրանք և խնդրել են իրաւունք տալ իրանց 4 ժամվայ ընթացքում ջնջել բոլոր հայերին: «Դուցէ հաւատայի ձեր խօսքին, եթէ առաջին համազարկը դուք չը լինէիք տուած դիակ բաց անող պաշտօնեաներին և իմ տանից մօտ լինելով՝ գնդակները չը թափվէին տանս մէջը. ահա դրանք»,—պատասխանել է գեներալը և ցոյց տուել նրանց իր տնից հաւաքած գնդակները:

Ի՞նչ կը լինէր մեր ճարը, եթէ այդ փորձը կատարված չը լինէր իրան գեներալի վրա...

Երեկոյեան 7 ժ.

Սկսվեց հրդեհ: Այրվում են վեցերորդ շրջանի՝ Ղուլմուղ թաղից ցած հայերի և թուրքերի տներ: Այրվում է և Աղա-Իրզայի տունը, որը թուրքերն իրանք հրդեհեցին: Երբ որ նրանց սպառնում է այդտեղից փախչելու վտանգը, իրանք հրդեհում են և փախչում: Դա թուրքերի ամենաամուր դիրքերից մէկն էր...:

Հրացանաձգութիւնը սաստկացաւ: Ռուսները չեն վտահանում թուրքերի թաղը գնալ. նրանց սպանում են, հայհոյում, պլոկում: Մի զինուորի Խօջալլուից գալիս հրացան են արձակում, մօտենում, հանում վարտիքն ու կօշիկները և իրան ծեծում բաց թողնում: Նա լալով եկել էր հայերի թաղը: Հագցրին նրան վարտիկ և կօշիկներ:

Այրվում է խանի աղջկայ բաղնիքը, վերևից հայերի տներ և ներքևից Ջաֆար-բէկ Վեզիրովի (նախկին Աարի-Բաբայի) և նրա շարքի տները:

Երեկ. 10 ժ.

Գոլոշչապովի բնակարանի վրա (տուն Ասրի Այդինեանի) անհամար գնդակներ են թափվում թուրքերի կողմից: Մօտենում է և հրդեհը: Նա թողեց այդ տունը և տեղափոխվեց «Մարդիի» հիւրանոցը:

Այդտեղ են քաշվում և միւս ռուս աստիճանաւորները:

Յուսահատական կռիւ է. թուրքերը աշխատում են «ղում-ղում» գնդակների համազարկերի խլացումով սարսափ ազդել հայերին, բայց միշտ յետ են նահանջում: Մեր ինքնապաշտպանութեան ոյժը կռւում է անվեհեր եռանդով և անձնուիրութեամբ, քան անցեալ տարի: Կռւի մէջ զինված կիներ ու աղջիկներ էլ կան: Դրանք փափկասուն հայ տիկիններ չեն, այլ անձնուրաց հայրենասէրներ...

13 յուլիսի, առ. 8 ժ.

Ամբողջ գիշեր կռիւը շարունակվում էր նոյն ուժգնութեամբ, ինչ որ երէկ: Մէջ ընդ մէջ լսվում էին թնդանօթի ձայներ: Գիշերվայ կէսից զօրքը դադարել է, յետ քաշվել, և կռւում են հայ ու թուրք: Միայն թուրքերի թաղում ապրող օսետին սպայ Ջերնեավսկին, որ մինչև այսօր թուրքերին կրթում էր զինվարժութեան մէջ և որի այդ սխրագործութիւնը քաջ յայտնի է գեներալին, իր հարիւրեակով ուղղակի կռւում է հայերի դէմ յարձակման առաջին րոպէից սկսած՝ դէպի Ղուլմուղլի թաղը և շնորհիւ նրա միջամտութեան ու խանգարման հայերը այստեղ զոհեր ու վիրաւորներ են տալիս: Նրանց գնդակներից էր որ երէկ ընկաւ երկու զինուոր Ղուլմուղլում, որը և սաստիկ կատաղեցրեց տեղական զօրքին:

Երևանեան դռներից ու Ղայբալուի ձորակից կամենում են ներս խուժել Ջառալուի և Խալֆալուի թուրքերը, բայց քարինտակեցիք ու ղայբալուեցիք յետ են մղում նրանց: Եւ այսպէս, սաստիկ հրացանաձգութիւն է դուրսը՝ Եարմայում և Ղայբալուի ձորում:

Առաւօտ. 12 ժ.

Գեներալը հայ և թուրք պատգամաւորներին ժամը 12-ին կանչեց իր նախկին բնակարանը՝ Այդինեանի տունը, հաշտութեան մասին խօսելու և վերջ տալու կռւին: Բայց երկու կողմն այնպէս կատաղած կռւում են, որ հազիւ թէ մտածեն պատգամաւորական խորհուրդ կազմելու և հայ ու թուրք իրար երես տեսնելու: Ի՞նչ հաշտութիւն: Անամօթ, վարկաբեկ, խրտուիլակային մի զզուելի արտասանութիւն է դարձել արդէն «հաշտութիւն» խօսքը...:

Թուրքերը երկու կօզակի ձեռքով ուղարկեցին Ալիի դրօշակը, յայտնելով, որ ձեռք են մեկնում հաշտութեան, բայց երկիւղ են կրում Այդինեանի տունը գնալ: Գեներալը յետ դարձրեց և ասաց, որ ինքը մարդիկ է ուզել և ոչ լաթի կտոր, և նորից հրամայեց ժամը 6-ին անպատճառ գալու:

Տեսնենք էլ ինչ լաւ խաղեր են, ինչ կոմեդիաներ...:

Երեկոյ. 6 ժ.

Հրացանաձգութիւնը շարունակվում է ընդմիջումներով:

Ղայբալուի դիմաց էինք դուրս եկել՝ քերծի գլուխը: Այնտեղ, հեռու անտառներում ու լեռներում, գիւղի գլխին գնդակների արագ սուլոցներ են վզվզում: Գիւղից օգնութիւն կանչեցին: Մինչև Գոլոշչապովի մօտ հասնելն ու յայտնելը՝ մի գիւղացի սուրհանդակ մեր ետևը կանգնած էր գեներալի պատշգամբում: Գեներալը տեսնելով նրան, բարկացած հարցրեց գալու պատճառը: «Աղա, 4000 քիւրդ շրջապատել է մեզ. գիւղը ձեռքից գնաց. խնդրում ենք օգնութիւն»: Գեներալը հրամայեց թնդանօթ հասցնել քերծի գլուխը: Կէս ժամից արդէն թնդանօթն այնտեղ էր և արձակվեց հինգ անգամ ուղղակի դէպի երևացող արշաւախումբը, որը պատասխանում էր թնդանօթին աւելի համազարկերով: Բայց յետ փախան, ի հարկէ, թագ կացան և էլի կը սպառնան ճեղքել, ոտի տակ տալ Ղայբալուին ու անցնել Շուշի:

Նոյնը ուզում են անել և Աղդամի թուրքերը, բայց Ասկերանը կապված է:

Երեկոյ. 10 ժ.

Լուր ստացվեց, որ Կարեագինից մեծ քանակութեամբ թուրքեր են գալիս դէպի Շուշի. իսկ գաւառի դրութիւնը սաստիկ անհանգստացնող է:

«Ձևական հաշտութեան» բանակցութիւնը մնաց: Մինչև այժմ ոչինչ չը կայ, չը նայած որ երկու կողմն էլ ցանկանում են խաղաղութիւն: Կռիւը շարունակվում է սաստկութեամբ: Նոր հրդեհներ են երևում:

14 յուլիսի, առաւօտեան 12 ժ.

Այս գիշերվայ կռիւը հայերի համար անաջող անցաւ: Մօտ տասը զոհ տուինք, որոնց մէջ կային ընտիր տղերք և դաշնակցական գործող Արտէմ Տէր-Մարտիրոսեան: Դրանք կռւում էին Դաբաղների ձորում և նախկին Գեօզալեանցի տան մօտերքը:

Առաւօտեան 6—8 ժամից հրացանաձգութիւնը թուլացաւ:

Երկու օր, երկու գիշեր... և դրութիւնը շարունակվում է լինել նոյնը, գեներալ-նահանգապետի աչքի առաջ, կանգնած զօրքի դիմաց, առանց դադարեցնել կարողանալու: Միթէ սա միևնոյն Գոլոշչապովը չէ: Նա է, բայց... ծրագիրը այն չէ...

Հայերի զոհը՝ 14 սպանված, 59 վիրաւոր, որոնցից 3 վտանգաւոր, 17 լուրջ և 39 թեթև, ոտքի վրա: Թուրքերինը՝ դեռ անյայտ է: Այրված տների թիւը հասնում է հարիւրից աւել:

Երեկոյեան 12 ժամին

Թուրքերն այսօր քանի անգամ սպիտակ դրօշակ ուղարկեցին պաշտօնական նամակների հետ և խնդրեցին վերջ տալ կռւին ու հաշտութիւն կնքել: Հայ պատգամաւորները ժողովրդի քննութեան և որոշման առաջարկեցին իրանց ծրագրած մի քանի պայմանները հաշտութեան մասին, որը տուեց այսպիսի եզրակացութիւն, կամ պահանջ.—1) Քանդել Գովհար-աղի և Հաջի-Վալիեվի տները, որոնք թուրքերի ամենավտանգաւոր դիրքերն են: 2) Արգելել զինված և խմբովին թուրք մտնելու քաղաք մինչև քօչի վերադարձը և այնուհետև ընդմիշտ: 3) Վերացնել բոյկոտը և հայերին ապրանք ծախել ու քրաճ բերել այն գնով, ինչով որ իրանց թուրքերին: 4) Խաղաղութիւնը ապահովել գիւղերում: 5) Երկու կողմերի պրօվօկատորներին և խռովարարներին, որոնք պատճառ կը լինեն նոր ընդհարման, խիստ քննութեամբ երևան հանելուց յետոյ հեռացնել մեր միջից: 6) Վերադարձնել գերիները, թէ մարդ և թէ կին, որոնք կարծվում է թէ կենդանի են և գտնվում են Աղդամում: 7) Բանալ հայերի և թուրքերի սահմանում՝ քաղաքի մի ծայրից միւս ծայրը 45 արշին լայնութեամբ մի փողոց՝ երկու ազգաբնակութիւնն իսպառ անջատելու համար իրարից և այդ փողոցի վրա կենտրոնացնել հասարակական և պետական հիմնարկութիւնները: 8) Ապահովել առաջին օրը սպանված Սահակի ընտանիքը, որի մահը պատճառ է դարձել թուրքերի կողմից յարձակման և կոտորածին:

Յուլիսի 15-ին

Քաղաքի կեանքն սկսում է կամաց կամաց սովորական ընթացքի մէջ մտնել: Սակայն խանութները դեռ փակ են, հատ հատ դեռ լսվում է գնդակի ձայն. ջուրը կտրված է, պօստային հաղորդակցութիւններն ընդհատված և հեռագրական բոլոր թելերը կտրատված դէպի ամեն կողմ:

Ընտրվեց 15 հոգուց բաղկացած մի յանձնաժողով հայերի միջից, որը վերոգրեալ պայմանները պիտի դնէ թուրքերի առաջ և խաղաղութիւն կնքէ նոյն պայմաններով: Այդ պայմաններն ընդունվեցին թուրքերից, բացի առաջին կէտից:

Տխրահռչակ սպայ Ջերնեավսկի աշխատում է ամեն միջոց գործ դնել և բամբասել հայերին և այդպիսով արհաւիրքը աւելի ընդլայնել: Նա, տեսնելով որ իր բոլոր մեքենայութիւնները հայերի դէմ չեն անցնում, հնարել է մի այլ միջոց. պաշտօնական զեկուցում է տուել գեներալին թէ՝ «հայերը ապըսպրել են ինձ մի զինուորի միջոցով իմ զօրքով հեռանալ խանի աղջկայ տնից, որովհետև վճռել են հրդեհել այդ տունը. ինչպէ՞ս վարվեմ...»: Քննվեց, ստուգվեց, որ դա լոկ պրօվօկացիա է. ոչ մի զինուոր այդ չը վկայեց և հայերը ոչ մի հնարաւորութիւն չէին կարող ունենալ այդ տանը մօտենալու:

Ջերնեավսկու զինուորներից վեց հոգի անցնում էին հայերի թաղը. նրանց երկուսին ծանր վիրաւորեցին, իսկ չորսը փախան և յայտնեցին սպային, որը զեկուցեց գեներալին, թէ հայերն էին գնդակ արձակել։ Գեներալի անձամբ արած հարց ու փորձից ստուգվեց, որ արձակողները թուրքերն էին եղել և ոչ հայերը։

Եւ այդ տեսակ պրովօկատորը դեռ մնում է պաշտօնի մէջ։

Հեռագրատան չինովնիկը 25 կոպեկով երկու անգամ գնաց թուրքաց մասում կտրված հեռագրաթելերը կպցնելու, երկու անգամ էլ գնդակներ արձակեցին և յետ դարձրին։

Երեկոյեան 9 ժամից վերսկսեց սաստիկ հրացանաձգութիւն։ Ուզում են փչացնել Հաջի-Վալիևի սան դիրքը, որը պաշտպանում է հայկական գրեթէ ամբողջ թաղին։

Յուլիսի 16-ին

Ամբողջ գիշերը հրացանաձգութիւն. առաւօտեան աւելի սաստիկ։ Ժամը 7-ին Վալիևի դիրքը օդը ցնդից... որին հետևեց հրդեհը, որովհետև թուրքերը չը կամեցան ընդունել հայերի առաջարկը և կամովին քանդել այդ դիրքը։ Մերոնք առաջ են անցնում։ Գեներալը զայրացել է և թոյլ չէ տալիս աւելի առաջ գնալ։ Կռիւը շարունակվեց մինչև ժամի 2-ը։ Ժամը 4-ին հայ և թուրք պատգամաւորները, հոգևորականութեան ներկայացուցիչները և գեներալ-նահանգապետը անցան երկու կողմի սահմանները, անձամբ կանգնեցրին հրացանաձգութիւնը և հասնելով Թոփխանա, խուռն բազմութեան ներկայութեամբ յայտնեցին, որ հաշտութիւն է։ Այդտեղ խօսեցին բժ. Մեհմանդարով, վարդապետը և մոլլան սովորական «համերաշխութեան քարոզները»...

Ես շատ յոռետես եմ դէպի հաշտութեան խօսքը և անուանում եմ դրան աւելի «զինադադար կամ ընդմիջում» և ոչ բնաւ հիմնաւոր հաշտութիւն, քանի որ մի տարի է ոչ խաղաղութիւն ենք տեսնում և ոչ հաշտութիւն։

Դադարեց զէնքը։

Վերջին երկու օրվան հայ զոհերի թիւը 6 է, վիրաւորներ մօտ 15։ Թուրքերի բոլոր սպանվածներն այս չորս օրում 100-ից աւել են ասում։

Յուլիսի 17-ին

Քաղաքում դադարեց, իսկ դուրսն անխաղաղ է—Ասկերանը շրջապատված է թուրքերով. ուզում են զոռել, անցնել, և դրա համար կռիւ է հայ և թուրք գիւղերի միջև։ Քաղաքի դրսից սպառնում են մտնել Ջանսուլի թուրքերը Բարինտակի և Ղայբալուի վրայով։ Տ.

ՎԵՐՋԻՆ ՃԻԳԸ

Կռիւը վերջացել էր...։

Կատարվում էր ծաղրական արարողութիւն։

Գեներալ-նահանգապետ Գօլօշչապօվը միջնորդի դեր էր ստանձնել հայ-թուրքական լարված յարաբերութիւնները մեղմելու։ Պրովօկացիան, չինովնիկական միջամտութիւնը, չեզոք տարրերի պատուական բանսարկութիւնները կարմիր հիւսուածքով մանել էին կռւող ազգերի արանքը և մի վիթխարի ոյժ տարածել այնտեղ, ցինիքական քրքիջներով հրճուանք թափելով—խմ, խմ, խմ, հմ, հմ, հմ։ Կատարվում էին վայրկենական արագ ելևէջներ։ Մղվում էին մտքերի, հասկացողութիւնների պայքարներ։ Մեր կապը նրանց ձեռքին էր. քաշում էին՝ դէպի որ կողմ ուզում էին։ Քաշողը մէկ չէր, երկուս չէր. բռնած մեծից մինչև փոքրը ամեն մէկը որոշ չափով դեր ունէր երկու կողմերումն էլ...։

Ի՜նչ կատարելագործված և խնամքով մշակված խաղեր...։

Ահա մի սպայ, երիտասարդ, համակրելի դէմքով, բայց սևացած, վաճառված խղճով, որ աւելի ճարպիկ ու հնարագէտ է գտնվում տարածելու կռւող կողմերի հակառակ բանակում, թէ հայերի փամփուշտը սպառվել է, արէք՝ ինչ ուզում էք։ Դրան հետևում է թուրքական մի մեծ պահանջ.—յետ դարձրէք մեզ Աղա-Իրզի դիրքը, դատարկեցէք այդ տունը հայերից. դա մերն է, պիտի հանենք, պիտի պահպանենք։ Պահանջը ըստ երևոյթին իրաւացի է. պէտք է յետ դարձնել սեփականութիւնը։ Սակայն չեն քննում իրերի փաստական, սպառնական կողմը, թէ յետ դարձնելով դիրքը նորոգում են արիւնոտութեան կրկին ասպարէզ, թշնամու ձեռքն են տալիս սուր և թուր մեզ մորթելու։ Այդ դիրքը իր բարձրաւանդակութեամբ սպառնում է հայկական մի մեծ թաղի. սկսած Ագուլեաց եկեղեցուց մինչև Թոփխանայի գլուխը բաժնում է նրա գնդակը...։

—Տուէք, մաքրեցէք տունը, շատ յետին մտքերով մի ծանրաբեռնէք ձեզ,—ասում է հրամանը և աւելացնում.—տուէք, ոչինչ չի լինիլ, չեն համարձակվիլ...։

Հրամանը կատարվում է։

Ակնթարթ չէ անցնում, հարիւրաւոր զինված թուրքեր թափվում են այնտեղ, գրաւում դիրքը։ Նրանք գալիս են իրանց սիրեցեալ սպայի՝ Ջերնեավսկու խնամքով տեսած պատրաստութեամբ, գալիս են թնդանօթով, հրդեհածիգ խմբով, հրդեհի անագին նիւթերով՝ կժեր, կուլաներ, թիթեղեայ և տակառյ ամաններ նաւթով լցրած...։

Ամսի 21-ին էր այդ։ Ուշացած «հաշտութեան» բանակցութիւնները դեռ չէին վերջացել։ Ամեն օր նոր ժամանակ էր տրվում խաղաղութեան պայմանները կնքելու, ամեն օր էլ թուրքերը նոր յապաւումներ էին կատարում պայմանների մէջ և քիչ էր մնում հասցնէին գլուխ։ Պարզ կերպով ձգձգվում էր բանը, քաշքշվում էր 4—5 օր, իսկ Գօլօշչապօվը կտրուկ միջոցների չէր դիմում։

Նոյն օրը գեներալի թարգման Ֆարրաջ-բէգը գեներալի յանձնարարութեամբ գնաց թուրքերի մէջ, որ աշխատէ փութացնելու «հաշտութեան» գործը։ Նա վերադարձաւ կէսօրից յետ և լուր բերաւ, թէ թուրքերը պատրաստ են սիրով վերջ տալու խառնակութիւններին և խնդրում են ժամանակ տալ մինչև հետևեալ օրվայ ժամի 10-ը...։

Այդ օրօրը իր սատարում ունենում է այսպիսի որոշում։—Թուրքերի «Ջանփիդայի» կուսակցութիւնը, որի ձեռքին է կռւող ոյժը և զէնքը, դրսից նոր ոյժ ստացած լինելով, հակառակ խաղաղ մեծամասնութեան կամքին, մտնում է մզկիթ և երդվում վերջին ճիգը թափել և ջարդի մէջ մտնել հայերի հետ—կամ մեռնել, կամ կոտորել։

Հայերը գուշակում են չարամիտ նպատակը. Նրանք չեն հեռանում Աղա-Իրզի սան մօտից և ամրանում են թուրքերի դէմ յանդիման, շատ մօտիկ, այնպէս որ մօտիկութիւնը նրանց նպատակի իրագործման պէտք է անշուշտ խանգարէր։ Այդ տեսնում են թուրքերը, տեսնում է և Ջերնեավսկի և պահանջում է հայերից թողնել թուրքի սահմանը և հեռանալ։ Սկսվում է վէճ։ Այդտեղ ներկայ են լինում Գօլօշչապօվի ադիւտանտ Տերիթով և շատ ամբոխ, իսկ մէջտեղ կանգնած են լինում ռուս զինւորներ։ Ջերնեավսկի պնդում է, որ հայերն անպայման հեռանան, շատ լաւ իմանալով որ եթէ նրանք հեռանան՝ հայերի թաղը համարեա կորած է և թուրքերը մեծ կոտորած ու հրդեհ պիտի առաջացնեն։ Բայց ի՞նչ որ է, նա ձեռք չէ քաշում։ Հազիւ մարդը գլուխ էր բերել իր դիւային խաղը և թուրքը ձեռքից տալը մնաց էր... Նա երեսը շրջում է դէպի թուրքերը և նրա կծու հայեացքը բերում է հեռուից մի խուլ որոտ, որին յայրկենապէս հետևում է վիճողական դիրքի հրացանների ճառոզը դէպի փողոցի մէջ կանգնած անզէն հայերը։ Ամբոխը լեղապատառ փախչում է։ Այդտեղ ընկնում է մի զինւոր և վիրաւորվում 2 հայ։ Հրացանաւորներն ամրանում են դիրքում, որը այնքան էլ պաշտպանողական ոյժ չէ ունենում, և կտրում են թուրք խուժանի առաջը։ Սարքած կռւի դաշտը նրանց թողնելով կռւողների մի թոյլ և մի ուժեղ կողմերի ձեռքին՝ չարամիտ սպան և թիկնապահը փախուստ են տալիս, համոզված լինելով որ հայերը պիտի նահանջեն մեծ պարտութեամբ։ Երեկոյեան ժամը 7-ից մինչև առաւօտեան ժամի 10-ը տեղի է ունենում կատաղի կռիւ։ Այդ անառիկ ամրութիւնը դատարկվում է թուրքերից. ուժը սաստիկ ջարդ է տալիս նրանց։ Փախչողները տանում են իրանց հետ անհամար դիակներ...։ Հայերից ընկնող չէ լինում. միայն թուրքերի արձակած գնդակներից Թոփխանայի թաղում վիրաւորվում են մի կին և երկու տղամարդ։ Փախուստի վայրում գտնվում են երկու քանդ վառօդ, թնդանօթի նիւթեր, նաւթ 15—20 ամաններով և հրդեհի համար փայտներ, լաթեր, ծղոտ, փայտ և այլն.—Ֆարրաջ-բէգերի բերած «հաշտութեան դաշինքի» ամուր գրաւականները...

«Մահ կամ ազատութիւն» ուխտի պարտութիւնից յետոյ մեր «խաղաղասէր» հարևանները դարձեալ բժ. Մեհմանդարովի միջնորդական նամակների հետ սպիտակ դրօշ ուղարկեցին և երես ունեցան զինադադար հայցելու։ Հայերը զիջեցին. խնայեցին հարևանութիւնը, բաւական համարեցին տուած դասը և խրատը։ Զիջեցին... Կարող էին մեծ հարուած տալ։ Իրանք լինէին մեր տեղ, այդպէս չէին վարվիլ։ Սակայն մենք ցոյց տուինք մեր անյիշաչարութեան վեհ զգացմունքները։ Թող ամաչեն և թքեն նրանց երեսին, որոնք ցուլամարտութեան կրկէսներ են սարքում մեր առաջ՝ մէկի կամ միւսի արիւնոտված դիակների վրա զզուելի քրքիջներ արձակելու։

Տ.

ՀՐԱՄԱՆ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԻՆ

№ 235

25 յուլիսի 1906 թիւ, Կօջօրում

Ներկայ 1906 թուի յուլիս ամսին 83-րդ հետևակ Սամուրսկի գնդի 6 րդ, 9 րդ, 10-րդ, 11 րդ և 12-րդ վաշտերի, որոնք գտնվում են Դեշլաղարում (Դաղստանի շրջան), զինւորների մէջ սկսեցին յուզումներ երևալ։ Ագիտատօրների գրգռմամբ, որոնց թւում կային—դժբաղդաբար, նոյն վաշտերի մի քանի ունտեր-օֆիցերներ ևս, զինւորները ժողով գումարեցին իրանց զօրանոցների մօտ և առաջարկեցին այնտեղ ներկայ եղող օֆիցերներին հեռանալ, իսկ յետոյ շրջապատելով ուչեբնիյ կոմանդի բնակարանը, զինաթափ արին այս վերջինի զինւորների մի մասը, իսկ միւս մասին աջողվեց դուրս տանել և թաքցնել իրանց հրացաններն ու փամփուշտները ապահով տեղում։ Դրա հետ միաժամանակ ապստամբված վաշտերի զօրախմբերը գրաւեցին Դեշլաղարի պօստ-հեռագրական գրասենեակը և այն ճանապարհները, որոնք Դեշլաղարից տանում են դէպի երկաթուղային Բույնակ և Ղայաքենդ կայարանները։

Ուչեբնիյ կոմանդի կացարանի մօտից ապստամբ վաշտերը մեծ բազմութեամբ, հրացաններով զինված, երաժշտական նուագածութեամբ առաջ շարժվեցին դէպի գնդի հրամանատարի բնակարանը այն նպատակով, որպէսզի նրան կալանաւորեն, գնդի դրօշակը վերցնեն և տանեն նրան պահակատունը, ինչպէս որ որոշել էին ապստամբները իրանց ժողովում։

Գնդի հրամանատար գնդապետ Լեմկուլը, այդ որոշման մասին տեղեկութիւն ստանալով ուչեբնիյ կոմանդի կառավարիչ պօրուչիկ Գապօնօվից, որին զեկուցել էին ժողովին մասնակցող կոմանդի զինւորները, անմիջապէս իր մօտ հրաւիրեց վերոյիշեալ վաշտերի բոլոր ներկայ գտնվող օֆիցերներին՝ առաջարկելով նրանց իրանց հետ վերցնել և իրանց սուրհանդակները։ Բոլոր օֆիցերները որոշեցին միաձայն դրօշակը չը տալ ապստամբներին, մանաւանդ որ ստացած տեղեկութիւններից յայտնի էր դարձել, որ նրանք մտադիր էին այրել դրօշակը։

Քիչ ժամանակից յետոյ զինւորները, խառնիխուռն, մօտեցան գնդի հրամանատարի բնակարանին. նրանց միջից բաժանվեցին մի հարիւր հոգի, որոնք, հրացանները լցնելով, մօտենում են նախադռանը, ուր հաւաքված օֆիցերները դիրքեր էին բռնել, առաջադրում են իրանց պահանջները—յանձնել զէնքերը և տալ դրօշակը։ Այդ պահանջներին պատասխանեցին օֆիցերները, որ նրանք թոյլ չեն տալ դրօշակը վերցնել և ոչ էլ իրանց զինաթափ անել և կը պաշտպանեն, քանի ողջ կը լինեն. իսկ գնդի հրամանատար գնդապետ Լեմկուլը վճռողական և եռանդուն կերպով ասաց մօտեցող ապստամբներին. «Քանի ես ողջ եմ, թոյլ չեմ տալ որ այդ բանը անէք. դրօշակը դուք կարող էք տանել միայն իմ դիակի վրայից անցնելով»։ Ուշադրութիւն չը դարձնելով օֆիցերների և գնդի քահանայի համոզիչ խորհուրդներին և խօսքերին, զինւորները, ագիտատօրների գրգռմամբ, առաջ շարժվեցին և մի ագիտատորի արձակած ազդանշան գնդակով, սկսեցին խառը—անկարգ հրացանաձգութիւն դէպի հաւաքված օֆիցերները։ Այդ հրացանաձգութեան ժամանակ սպանվեցին գնդի հրամանատար գնդապետ Լեմկուլը, գնդի քահանայ Վլադիմիր Գալմօվը, գնդապետ Պօկրօվսկին, կապիտան Սարքսեանը և շտաբս-կապիտան Մօրգանօվը։ Վիրաւորվեցին՝ կապիտան Յարլամօվը ծանր կերպով և պօդպօրուչիկ Գրինկևիչ-Մաչուլսկին՝ թեթև կերպով. զինւորներից սպանված են երկուսը, և վիրաւորված երկուսը, որոնցից մէկը ծանր կերպով։

Այդ բոլորից յետոյ, վաշտերը ուշքի եկան. զինւորները իրանց յանձնեցին գրգռողներին ու ագիտատօրներին, ապա իրանց սովորական պարապմունքներին դիմեցին և յօժարակամ յանձնեցին իրանց հրացանները գնդի աւագ օֆիցերներից ողջ մնացած փոխ-գնդապետ Կուզնեցօվին։ Բայց վայ, արիւնահեղ և անմիտ գործն արդէն կատարված էր։ Մոռանալով իրանց երդումը և իրանց զինւորական պարտականութիւնը, մոռանալով զինւորի պատիւը, խիղճը և Աստծուն, այդ անմիտները ենթարկվեցին յանցաւոր ագիտատօրների խորհուրդներին ու դրդումներին և, յանդգնաբար խախտելով զինւորական կարգապահութիւնը, իրանց հին հրամանատարին, որ Գէօրգիեվսկի կավալեր էր, սպանեցին, շաղախեցին իրանց ձեռքերը իրանց օֆիցերների—պետերի արիւնով. չարութիւնից կուրացած, չը խնայեցին նոյնիսկ գնդի քահանային, իրանց հոգևոր հօրը. և ծանր նախատինքով նրանք արատաւորեցին Սամուրսկի գնդի փայլուն, հին ռազմական անունը։

Ագիտատօրներն ու այդ գործի հեղինակները յանձնվում են դատարանին նրանց վերաբերմամբ գործադրելով զինւորական ժամանակի օրէնքները և, ի հարկէ, նրանք բոլորն էլ իրանց գործած յանցանքի համար ամենածանր պատիժ կը կրեն։ Բայց ինչով և ինչպէս մաքրել այն արատը, որ նրանք իրանց ստոր գործողութեամբ դրեցին ամբողջ գնդի վրա։ Ի՞նչով վարձատրել ու մխիթարել հրացանաձգութեան ժամանակ սպանվածների բոլոր մերձաւորների ու հարազատների վիշտը։

Ծանր զգացմունքով ու վշտահար սրտով ես յայտարարում եմ այդ տխրալուր դէպքը Բարձրագոյն կամքով ինձ յանձնված շրջանի զօրքերին և համոզուած հաւատացած եմ, որ ինձ հետ միասին ամբողջ փառաւոր հին կովկասեան զօրաբանակը զայրոյթով ու արհամարհանքով կը վերաբերվի այդ չարագործութեանը, որ կովկասեան զօրքերի պատմութեան մէջ մի չը լսված և անօրինակ երևոյթ է։

Յիշատակենք աղօթքով հին հերոս-հրամանատարի յիշատակը, գնդի քահանայի և այն բոլոր օֆիցերների, որոնք ընկել են այդ գործում։ Ոչ թշնամու հանդէպ երես առ երես, ոչ թշնամու հետ արիւնահեղ կռւում պատրաստեց ճակատագիրը մահ նրանց համար. ընկան նրանք հայրենի կացարանում, խաղաղութեան մէջ, իրանց խելակորոյս ստորադրեալների ձեռքով, բայց և այնպէս ընկան նրանք հերոսական մահով, պաշտպանելով վաղեմի ռազմադրօշը, փրկելով փառաւոր Սամուրսկի գնդի մինչև այդ անարատ պատիւը։ Յաւերժութիւն ձեր աճիւններին, կովկասեան փառաւոր զօրքի ազնիւ և արժանաւոր զաւակներ։ Թող ապրի դարեր ձեր փայլուն յիշատակը կովկասեան զօրքերի մէջ և, մեր խռովայոյզ օրերում, ձեր հերոսական մահը թող ծառայէ իբրև վսեմ օրինակ պարտաճանաչութեան քաջերի և անձնազոհ անձնուիրութեան։

Սամուրցիներ! Ձեզ է այժմ ուղղում իր խօսքը ձեր գլխաւոր հրամանատարը։ Այն ստոր չարագործութիւնը, որ կատարվեց ձեր հարազատ գնդի ընտանիքի մէջ, ծանր արատ դրօշմեց Սամուրսկի գնդի ազնիւ անուանին։ Ձեր իւրաքանչիւրի վրա այժմ սուրբ պարտականութիւն է ընկնում թագաւոր կայսրի, մեր ինքնակալ հրամանատարի, ամբողջ կովկասեան զօրաբանակի և, վերջապէս, ձեր փառաւոր նախնիքների սրբազան յիշատակի առաջ, որոնք իրանց կեանքի և արեան գնով գրաւել են սամուրցիների համար կովկասեան կռիւներում ամենապատուաւոր տեղ ռուսաց զօրքի շարքերում, անձնանուէր ու ծառայութեամբ քաւել ձեր ծանր յանցանքների և խելակորոյս ընկերների մեղքերը, ու գովելի անձնանուիրութեամբ, երդումի դրած պարտականութիւնները կատարելով, այդ չը լսված նախատինքը մաքրել ձեր վրայից։ Ուզում եմ հաւատալ, որ ինձ հետ միասին այդպէս են մտածում և բոլոր ազնիւ սամուրցիները և որ նրանք կանեն բոլոր բան, ինչ որ մարդկային ոյժից վեր չէ, որպէսզի վերականգնվի հարազատ գնդի արատաւորված պատիւը։ Այդ բանի մէջ յոյժ գրաւական է ծառայում ինձ համար այն, որ Գրօզնո քաղաքում գտնվող Սամուրսկի գնդի 4-րդ բատալիօնը, ամենից շուտ իմանալով Դեշլաղարում կատարված անցքերի մասին, իսկոյն հեռագրով իմ թոյլտուութիւնը խնդրեց իրանց ևս ուղարկել գնացող զօրքերի հետ միասին, Դեշլաղարի վաշտերի ապստամբութիւնը ճնշելու համար, և այդ՝ ազնիւ զինւորներին վայել խնդիրը, ինչպէս, ես յարգեցի։

Սոյն հրամանը կարդալ օֆիցերների ժողովում, նոյնպէս և բոլոր վաշտերում և էսկադրոններում, բատարէաներում, հարիւրեակներում և զօրամասերում։ Ստորագրեց. գլխաւոր հրամանատար զօրքերի, գեներալ-ադիւտանտ, կավալերիայի գեներալ կոմս Վօրօնցօվ-Դաշկով։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

Թիֆլիս քաղաքի, Բօրչալուի, Գօրու և Դուշէթի գաւառների ժամանակաւոր գեն.-նահանգապետի կարգադրութիւնները.

Յայտարարվում է ի գիտութիւն ընդհանուրի, որ մի որևէ գրօսանքի, լուսավառութեան և ուրիշ նման զուարճատեղիներ կազմակերպելը, առանց թոյլտուութիւն ստանալու, արգելված է։

Ներկայ պարտադիր որոշումը խախտողը կենթարկվի ադմինիստրատիւ պատասխանատուութեան՝ 3000 րուբլի տուգանքի, կամ 3 ամիս բանտարկութեան։

Ստորագրեց՝ Թիֆլիս քաղաքի, Թիֆլիսի, Բօրչալուի, Գօրու և Դուշէթի ժամանակաւոր գեներալ-նահանգապետ Տիմօֆէև։

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

Մեզ հաղորդում են, որ Ղազախի գաւառի կողմից պատգամաւոր ընտրված բժ. Յ. Տէր-Միքայէլեանի ընտրութիւնը, իբրև ապօրինի պայմանների մէջ կատարված, բեկվել է և կարգադրութիւն է եղել նոր ընտրութիւններ անել։

—

Շամշադինի վիճակի կողմից Էջմիածնի կենտ. ժողովի համար պատգամաւոր ընտրվել է ուսուցիչ Արշակ Թումանեան. իսկ Դաշնակցութեան թեկնածու տ. Եղիշէ Քալանթարեան չէ անցել։

ՄԱՄՈՒԼ

Գերմանիայի Վիլհելմ կայսրը, ինչպէս հաղորդում են ֆրանսիական և գերմանական թերթերը, իր վերջին ճանապարհորդութեան ժամանակ շոգենաւի վրա խօսակցութիւն է ունեցել մի քանի ֆրանսիացիների հետ, որոնց ի միջի այլոց մամուլի ներկայ դրութեան մասին ասել է հետևեալը, սուրճ բռնելով Մարօկկօյի խնդիրը.

«Մարօկկօյի առիթով ինձ լաւ չեն հասկացել և իմ մտքերը այլաբանել են։ Ես դրա համար մեղադրում եմ միմիայն մամուլին։ Զարմանալի է պատասխանատուութեան պարտականութեան բացակայութիւնը, որ ընդհանրապէս տիրում է ժամանակակից մամուլի մէջ։ Ուրիշ ասպարէզներում մարդիկ որոշ պայմաններով են որոշ կոչում և պարտականութիւն յանձն առնում իրանց վրա։ Բժիշկը իրաւունք ունի հիւանդին խնամել միմիայն այն ժամանակ, երբ նա արդէն քննութիւն է տուել, որ սովորաբար երկար տարիների աշխատանք է։ Փաստաբանը իրաւունք ունի գործ պաշտպանել միայն այն ժամանակ, երբ նա աւարտել է իրաւաբանութիւնը։ Միմիայն ժուռնալիստը կարիք չէ զգում ոչ ուսում ստանալու և ոչ էլ քննութիւն տալու։ Շատ անգամ տեսնում էք, որ 22 տարեկան մի երիտասարդ աշխարհիս ամենամեծ և ազդեցիկ թերթում տպագրում է մի յօդուած, որը ուժեղ արձագանք է տալիս և ամենազօրեղ տպաւորութիւնն է թողնում ժամանակակից սերունդի վրա։ Դուք, ամեն օր լրագրներում կը պատահէք զանազան քննադատութիւնների և կօմմենտարիաների, որոնց հեղինակները ըստ երևոյթին պատուաւոր մարդիկ են, բայց իրանց գրած մասին յաճախ տեղեկութիւն չունեն։ Եւ այդպիսի մարդիկն են հասարակական կարծիքի ղեկավարները, որոնք մեծ ազդեցութիւն են թողնում ընթերցողի վրա, բայց իսկապէս նրանք այդ բանի համար կոչումն չունեն»։

Ֆրանսիական «Matin» լրագիրը տպագրելով կայսրի ճառը, հետևեալ սուր և տեղին նկատողութիւնն է անում. «Իսկ պարզաբար միայն ժուռնալիստները չեն, որոնցից քննութիւն չէ պահանջվում։ Այդ միևնոյն բանը միապետներին էլ է վերաբերում»։

*

«Кавказъ» լրագիրը զետեղել է մի յօդուած (№ 168) «Հայոց հարցի շուրջը» վերնագրով, որի մէջ քննութեան է ենթարկում այդ հարցը իր զանազան կողմերով։ Երկու խիստ գծեր բնորոշում են օսմանեան կառավարութիւնը, ասում է լրագիրը. առաջին, նա ապրում է ոչ իր ոյժերով, այլ ուրիշ պետութիւնների փոխադարձ մրցութեամբ. երկրորդ, նա ցոյց տուեց իր կատարեալ անընդունակութիւնը ռեֆորմ մտցնելու և եւրոպական կուլտուրայի սկզբունքները ընդունելու գործում։ Անհասարակ այդ երկրի կեանքի ներքին պայմանները այնպէս են, որ ոչ մի նոր և թարմ բան թափանցել չեն կարող. այդ պատճառով, օսմանեան պետութեան կազմի մէջ մտնող ազգութիւնների վիճակը օրէցօր վատթարանում է։ Մանաւանդ ծանր է վիճակը հայ ժողովրդի, որ մի ժամանակ այնքան սիրված էր թուրք փադիշահների կողմից և վայելում էր տիրող տարրի հետ միասին հաւասար իրաւունքներ և առանձնաշնորհումներ։ Հայաբնակ վիլայէթները, ուր կեանքը խփում էր աղբիւրի նման, դարձան աւերակների կոյտեր։ Այդ աւերված տեղերի ազգաբնակութիւնը մասամբ կոտորվեց, մասամբ գաղթեց և ցրվեց երկրագնդի զանազան անկիւնները։ Եթէ տեղ-տեղ ևս մնացել են հայ բնակութիւններ, նրանց կեանքը ներկայ ժամանակում ներկայացնում է միայն մի արիւնահեղ էպօպէա։

Ապա հեղինակը բացատրում է, որ հայերի գլխաւոր սխալն այն է եղել, որ նրանք դիմել են երբեմն Ռուսաստանի, երբեմն Անգլիայի պաշտպանութեան. նրանք, հայերը, հասկացան ապագայում այդ սխալը, բայց արդէն ուշ էր։ Եւ իբրև ապացոյց, առաջ է բերում վերջերս հայ մամուլի մէջ («Իրաւունք» լրագիր, «Մուրճ» ամսագիր) երևացած յօդուածները, որոնց մէջ այն միտքն է արծարծվում, որ քանիցս «Մշակն» ևս յայտնել է, այն է՝ բոլոր յոյսը չը դնել Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածի վրա, այլ աշխատել մօտենալ թուրք ժողովրդի և նրա առաջաւոր ինտելլիգենցիայի հետ, աշխատելով բացատրել նրանց, որ հայերի նպատակները և ձգտումները միևնոյնն են, ինչ որ թուրք աշխատաւոր մասսայի շահերը և ձգտումները։

Այս յօդուածը նոյնպէս ցոյց է տալիս հայոց հարցի վերաբերմամբ նոր քաղաքականութեան հետևելու անհրաժեշտութիւնը։

*

Յայտնի հայ գործիչ Իսրայէլ Օրու աշխատակից Մինաս վարդապետ Տիգրանեանցի մասին մի նոր տեղեկութիւն է գտնվել Պետերբուրգի ռուսաց սինօդի արխիւում։ Կ. Եզեան իր աշխատութեան մէջ «Մեծն Պետրոսի յարաբերութիւնները հայ ժողովրդի հետ», կենսագրական տեղեկութիւններ հաղորդելիս այդ վարդապետի մասին հաղորդում է և այն, որ նա, Մինաս վարդապետը, 1740 թ. մարտի 24-ին տուած իր խնդրագրով (լինելով արդէն 82 տարեկան) Մօսկվայի սինօդական կօնտորին խնդրում է ընդունել իրան ռուսաց եկեղեցու գիրկը, սակայն, ասում է պ. Եզեան, ըստ երևոյթին, այդ գործը անհետևանք մնաց։ Այժմ, ասում է Ե. Կ. «Отголоски» թերթի № 12-ում, բանից դուրս է գալիս, որ պ. Եզեանը մոլորվում է և գործին պաշտօնական ընթացք է տրվել։

Ռուսաց սինօդը պատասխանում է Մինաս արքեպիսկոպոսին, որ հնարաւոր է գտնում սուրբ հայրերի և եկեղեցական ժողովների որոշման հիման վրա, ընդունել նրան ուղղափառ յոյն-ռուսական եկեղեցու գիրկը, բայց այն պայմանով, որ նա նախապէս հրաժարվէ իր հայկական մոլորութիւններից, նզովէ իր աղանդը և երդմամբ խոստմնագիր տայ։ Ռուսաց սինօդի որոշումը զեկուցվեց կայսրուհուն և որ Մինաս արքեպիսկոպոսը ընդունվեց ուղղափառ եկեղեցու գիրկը. այսպէս կոչված 3-րդ չինի համաձայն։ Այդ մասին 1740 թ. ապրիլի 2-ին հրատարակվեց կայսրուհու կաբինետի կողմից հետևեալը.

«Հայ արքեպիսկոպոս Մինասին, համաձայն իր խնդրանաց, ըստ կանոնի սուրբ և առաքելական հաւատի և ըստ ժամանակի կարգութեան ուղղափառ կաթողիկէ առաքելական եկեղեցու, զկնի նզովման հայկական աղանդի, հաղորդել»։

Սինօդը հրամանագրում է այդ մասին Մօսկվայի սինօդական կանտօրին, որը զեկուցանում է, թէ «նա, արքեպիսկոպոս Մինասը, նզովելով իր հայկական աղանդը, ընդունվեց յոյն-ռուսական դաւանութեան գիրկը Տվէրի եպիսկոպոս սրբազան Միտրօֆանի ձեռքով, 1740 թ. ապրիլի 28-ին»։

Սակայն, ինչպէս երևում է նոյն ռուսաց սինօդի արխիվի գործից (1740 թ. № 385), Մինաս արքեպիսկոպոսը դրանից յետոյ մեռաւ. 1740 թ. մայիսի 9 ին նա խոստովանվեց յոյն վարդապետ Բենիամինին, հաղորդութիւն ստացաւ նրանից և մայիսի 12-ին վախճանվեց ու թաղվեց Մօսկվայի յունաց Նիկօլայեվսկի վանքում, թողնելով 1500 րուբլի փող և գրքերի ու ձեռագիրների մի թանկագին ժողովածու, որի ցուցակը գտնվում է սինօդի նոյն գործի մէջ։

Այս տեղեկութիւնները նոր լոյս են սփռում Մինաս վարդապետի կեանքի վրա և լրացնում նրա կենսագրութիւնը։

*

Մենք արդէն պատասխանեցինք «Ալիքի» այն անհեթեթ ամբաստանութեան, իբր մենք բլոկ ենք կազմել կղերականների, բուրժուաների և սօցիալ-դեմօկրատների հետ։ Հարկաւոր ենք համարում բերել և այն պատասխանը, որ տալիս է «Կայծ» թերթը «Ալիքի» այդ յօդուածին։

«Իր հին և սիրած պօլեմիկական ձևերին (ստախօսութիւններ, փաստերի աղաւաղումներ, հայհոյանք, բռնի ոյժ, սպառնալիքներ), դաշնակցականների օրգան «Ալիքը» աւելացրեց մի նոր ձև, և տենչում է դրանով հասարակութիւնը խաբել։ Նա հաւատացնում է, որ կղերականները, բուրժուաները և սօցիալ-դեմօկրատները բլոկ են կազմել Դաշնակցութեան դէմ, ազգային կենտրոնական ժողովի ընտրութիւնների առթիւ։ Այդ զարմանալի լօգիկայով, եթէ մենք սօցիալ-դեմօկրատներս դէմ ենք «ազգային հիմնադիր ժողովին» և միևնոյն ժամանակ այդ բանին դէմ են և բուրժուաները, և կղերը, կը նշանակէ որ սօցիալ-դեմօկրատը և կղերը միատեսակ են մտածում, միևնոյն նպատակները, միևնոյն ձգտումներն ունեն։

Այդ զուլուսական տրամաբանութեան դէմ ուրիշ պարագաներում և ուրիշ հասարակութեան մէջ, մենք բոլորովին աւելորդ կը համարէինք խօսել, բայց մեր «քաղաքակիրթ հայկական հասարակութիւնը» տարիներ դաստիարակվելով Դաշնակցութեան ազդեցութեան տակ, ստիպում է մեզ մի քանի խօսք նուիրել այդ «վայրենի յիմարութեան» (Դաշնակցութեան պօլեմիկական շտեմարանից)։

Մենք կռւելով այդ «ազգային, զուտ հայկական յեղափոխութեան» դէմ, կռւելով Էջմիածնում հաւաքվելիք կենտրոնական ժողովի դէմ—միշտ շեշտել ենք այդ բոլորի հակայեղափոխական տարրը, ռեակցիոն բնոյթը, կոչ ենք արել հայ բանւոր դասակարգին, հայ գիւղացիութեան՝ չը զբաղվել ներկայ մեծ և պատմական մօմենտում զուտ ազգային գործերով, չըբաժանվել ամբողջ Ռուսաստանի կռւող յեղափոխական ժողովրդից, մենք ասել ենք, որ այդ ազգային ժողովը նպատակ ունի բթացնել հայ բանւորի դասակարգային գիտակցութիւնը, աւելի ևս կղզիացնել նրան միւս ազգերի պրօլետարիատից։ Եւ այս մեր արգումենտացիային «Ալիքը» կարողացաւ պատասխանել ըստ իր վաղեմի սովորութեան—զրպարտութիւնով։ Թող Դաշնակցութեան գրողները հաստատեն, որ կղերը, բուրժուան բողոքում են այդ ընտրութիւնների դէմ, յենվելով այդ աշխարհահայեցողութեան վրա, մեկնելով այդ տեսակէտից։

Նրանք այդ չեն կարող անել և նրանց ստախօսութիւնը պարզ ապացուցում է նրանց մտաւոր և բարոյական խեղճութիւնը, սնանկութիւնը։

Եւ հէնց այդ է պատճառը, որ դաշնակցական մեծախօսները դիմում են մեր դէմ մղած կռւում այդպիսի էժան, դեմագօգիական միջոցի, ասելով թէ՝ սօցիալ-դեմօկրատները բլոկ են կազմել կղերի, բուրժուաների հետ»։

ԻՄ ՊԱՏԱՍԽԱՆԸ «ԱԼԻՔԻՆ»

«Ալիքը» կատարեց, o horribli dictus, իր սպառնալիքը։

Նա սպառնացել էր պատասխանել ինձ։

Եւ այս անգամ գործ էր դրել իր բոլոր արսէնալը—տափակութիւնների, անմտութիւնների, ողորմելի, խղճուկ և հօթենթօթեան տրամաբանութեան արսէնալը։

Այս անգամ ես ինքս ինձ վրա բարկացայ, բարկացայ, որ այնքան մեծ սխալ էի գործել։

Ես անուանել էի «Ալիքի» ղեկավարներին (որոնք, ի դէպ է ասել, իրանց վրա առան պ. Լ. Սարգսեանի կպցրած «խուժանապետ» տիտղոսը, և ամենայն իրաւամբ) կօմիկներ։

Այդ սխալ է. պէտք է անուանէի միմաներ։

Որովհետև «Ալիքի» պատասխանը կարդալուց յետոյ, բացի «միմոսներ» բացատրութիւնից, ուրիշ որ և է գնահատութիւն տալ անկարելի է։

Իսկոյն ես յիշեցի նաև ժողովրդական մի ասացուածք։ Մի անգամ, մի մարդ մտնում է իր այգին և տեսնում է մի գող՝ բարձրացած ծառի վրա, պտուղ է քաղում։ «Ա՛յ դու, անպիտան գող, ինչ իրաւունքով ես գողանում իմ պտուղները»։ Գողը տեսնելով որ բռնված, en délit flagrant («Ալիքը» շատ է սիրում ֆրանսերէն խօսքեր գործածել, ես էլ նրան հաճոյք պատճառելու համար նոյնպէս գործ եմ ածում), ճարահատեալ, պատում է. «Իսկ դու, ինչ իրաւունքով կնոջդ համար նոր կօշիկներ չես գնում»։

Ճիշտ այդպէս են վարվում «Ալիքի» խուժանապետ ղեկավարները։

Նրանց ասում են պարզ, մէկին, կտրուկ կերպով, որ դուք, պարոնայք Դաշնակցութեան այժմեան ղեկավարներ, ստեղծել էք բռնապետութիւն, խայտառակ բիւրօկրատիա, ես այսօր վե- որ դուք դաւաճանում էք ժողովրդական ազատութեան գաղափարին, գործ դնելով ձեր ազէտ զինւորների միջոցով բռնութիւն, ճնշումն ժողովրդի կամքի և խղճմտանքի վրա, որ դուք կեղծ-սօցիալիստներ էք, որ դուք կեղծօրէն էք յայտարարում ձեզ, նոր դաշնակցականներից, հայ աշխատաւոր մասսայի միակ պաշտպանը, միակ հովանաւորը, որովհետև մի կազմակերպութիւն, որ իր մէջ ընդգրկում է և կապիտալիստին, և կղերին, և բուրժուային, և չարչի-կուլակին, մի կազմակերպութիւն, որ բանտարկութեան, ձեր շղթայի է ենթարկում հողագործ-գիւղացուն մինչև այն աստիճան, որ հայ գիւղացին ստիպված է լինում յայտարարել, թէ չը գիտէ ում նախադասութիւն տայ, դաշնակցական զինւոր թէ թուրքին, մի կազմակերպութիւն, որ իր մէջքը դէմ է տուել կապիտալիստներին և կղերին—այդպիսի խայտառակ, բղետ, խայտաճամուկ կազմակերպութիւն իրաւունք չունի ասել—և կեղծում է փարիսեցիօրէն, երբ ասում է,—թէ նա աշխատաւոր մասսայի, պրօլետարիատի պաշտպանն է։

«Ալիքի» խուժանապետներին ասում են, թէ այդ է ժողովրդի ինքնապաշտպանութեան գործը, այդ է ձեր գործը. դուք մի պարծենաք դրանով, որովհետև, յամենայն դէպս, դուք չէք, որ «գնում էք արիւն թափելու, մեռնելու աշխատաւոր մասսայի համար». ոչ, դուք միայն գիտէք բազմել փառաւոր սենեակներում, բիւրօկրատիկան վարչութիւն ստեղծել, չաղ-չաղ ռոճիկներ սահմանել ձեզ, և ձեր ոյժերը գործադրել ձեզ այստեղ և այնտեղ ընտրել տալու համար։ Ձեր Դօրչինսկի-Թոփչեանները գաւառներում դասախօսութիւններ են կարդում, ագիտացիա անում ձեր թեկնածուների ընտրութեան համար։ Չէ՞ որ յանուն ինքնապաշտպանութեան կամ ճշուառ ժողովրդի արիւնաքրտինքից և կամ կապիտալիստներից հաւաքած դրամներով։

Եւ փոխանակ լրջօրէն, փաստացի պատասխանելու, հերքելու այդ մեղադրանքները, բողոքները, որոնք հայութեան զանազան անկիւններից թնդում են «բիւրօկրատ-բռնապետ գործողների դէմ (նոյն իսկ Ամերիկայից, ապացոյց դօքտոր Գաբրիէլեանի գիրքը), ալիքական խուժանապետները, նեղն ընկած, ճարահատեալ, տալիս են վերոյիշեալ գողի պատասխանի նման պատասխան. «Իսկ դուք, պ. Շահրիար, յիշեցէք Կօկօշկինին»։

Ասացէք խնդրեմ, ա՛յ ալիքական իմաստուններ, ինչ կապ կայ վերոյիշեալ մեղադրանքների և Հ. Առաքելեանի Կօկօշկինի գրքից քաղած մի պարբերութեան մէջ։ Դեռ մի կողմն թողնենք, որ Հ. Առաքելեանի յօդուածի մէջ յիշված է—ի հարկէ ոչ կոյրերի և գիտմամբ կուրացողների ու անբարեխիղճների համար—աղբիւրը. բայց, ընդունենք մի րոպէ նոյնիսկ, որ Հ. Առաքելեան քաղել է Կօկօշկինից կտորներ և աղբիւրը չէ յիշել, ասացէք խնդրեմ, միմոսներ, ինչ կապ կայ դրա և ձեր դէմ յարուցված մեղադրանքների մէջ։ Թէ՞ լօգիկա ասված բանը գոյութիւն չունի ալիքականների համար։

Ես չեմ խօսում դեռ այն ծայրայեղ անբարեխղճութեան մասին, որ արտայայտում են «Ալիքի» խուժանապետները, ինսինուացիա անելով, թէ մենք (ես և Լ. Սարգսեան) դուրս ենք եկել Դաշնակցութեան դէմ նրա համար, որովհետև նա տեսչութեան վրա աչք ունի տնկած, իսկ ես հասարակական ասպարէզից դուրս քշվելու վտանգի վախն ունեմ։

Ուրեմն, պարոն միմոսներ, եթէ ես հանդէս չը գայի նոր, կեղծ-սօցիալիստ դաշնակցականների դէմ, կարող էի ինձ զերծ համարել այդ վտանգից...։

Կարծում էք, թէ կարծելու ընդունակութիւնն ևս կորցրել էք։

Երևի, այո, որովհետև միմոսները կարծելու յատկութիւնից զուրկ են։

Շատ լաւ. թող ես դուրս քշվեմ այն հասարակական ասպարէզից, ուր գործելու են կեղծիքներ գործող և դրա համար խայտառակաբար վռնդված Թոփչեանների պէս անձինք, երէկվայ տիրացուները, կղերականութեան խունկ ծխողները, այսօր իրանց կեղծ սօցիալիստ-հնչակողները։

Եւ նրանք, որոնք դեռ երէկ կրօնական օրացոյցներ էին հրատարակում, նրանք, որոնք դեռ 3—4 տարի առաջ քահանայի փարաջան հագնելը մեծ պատիւ էին համարում, այսօր յանդգնում են մեզ, որ 30 տարի կռւում ենք կղերականութեան դէմ, մեղադրել կղերի հետ բլոկ կազմելու մէջ։ Ինձ այլևս ոչինչ չէ մնում ասել «Ալիքի» իրա երէկվայ (№ 75) «Ընտրողական պայքարը» վերնագրով առաջնորդողից յետոյ։ «Ալիքը» վերջապէս հասկացաւ «Մշակի» գգաստացուցիչ և մերկացողական յօդուածների ազդեցութեան տակ անել այն, ինչ որ պէտք էր վաղուց անել. նա յորդոր է կարդում իր կուսակիցներին և գործակալներին գործել ճշմարտութեամբ, օրինաւորութեամբ, չէզոքութեամբ, խոյս տալ բռնութիւնից, որպէս զի ոչ ոք իրաւունք չունենայ ասելու (իսկ ով ասում է, ըստ «Ալիքի», փոքրոգի ու անբարեխիղճ է), թէ Դաշնակցական կազմակերպութիւնը իր անուան և հռչակին անվայել միջոցներով է անցկացնում իր թեկնածուներին։

Մենք էլ հէնց այդ էինք ուզում, որ մաքրէք Դաշնակցութիւնը, բռնութեամբ, անվայել միջոցներով չը գործէք։

Ձեր բերանով դատեցիք ձեզ։

Բայց խուժանապետները ընդունակ կը լինե՞ն իրագործել այդ պահանջը։

Չեմ կարող չը պատասխանել և «Ալիքի» մի տգեղ ակնարկին, որ իբր թէ ես կարծիք եմ յայտնել առաջներում, «Մշակի» խմբագիր պ. Քալանթարի չը գիտեմ որ առաջնորդողի անորոշութեան մասին։ Դրանով ի՞նչ էք կամենում ասել. գիտէք թէ անորոշ առաջնորդողներ եղել են (և դրա պատճառը շատ ակնյայտնի է, եթէ յիշենք ցենզուրական պայմանները), բայց եթէ ձեզ համար հեղինակաւոր են իմ գրական կարծիքները, դուք գիտէք թէ ինչ կարծիք եմ ունեցել ես «Ալիքի» առաջնորդողների մասին, որոնց ես համարել եմ և համարում եմ հարիւրապատիկ ստոր, անհամ և խղճուկ, քան «Մշակի» առաջնորդողները. Փրազների, հայհոյանքների, սպառնալիքների, յոխորտանքների անպարծութիւնների կուտակումն և ոչ մի առողջ, թարմ միտք։ Բայց դարձեալ դա ոչ մի կապ չունի յարուցած խնդրի հետ։ Եթէ ես այսօր վեր կենայի և ասէի, թէ «Ալիքի» ղեկավարներից մէկի այսինչ վէպը փոխառութիւն է Անատոլ-Ֆրանսի այս ինչ վէպից, այդ պիղծ փաստը դարձնել ոչ մի կապ չէր ունենայ ներկայումս հրատապ դարձած այն խնդրի հետ, որ Դաշնակցութիւնը պէտք է դադարէ մի բռնապետական, բիւրոկրատական, հարստահարող ու կեղեքիչ կազմակերպութիւն լինելուց և դառնայ այն իդէալներին, որոնց մենք ամենքս աջակցում էինք և պաշտպանում։

Իսկ եթէ դուք կը շարունակէք գնալ ձեր կորստաբեր, խայտառակ շաւղով, մենք անպայմար կը հարուածենք, կը դատափետենք, կը մերկացնենք ձեզ և, որովհետև շատ էք սիրում ֆրանսիական բառեր, կասենք՝ A la guerre, comme à la guerre.

Ցտեսութիւն։

Շահրիար

ԱՆՎԵՐՋ ՄՐԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Մեր դրական Հաջի-Բաբաները բանակուի բռնվելով երբէք ըստ էութեան բան չեն կարողանում ասել և աշխատում են մի կերպ խուժանի առջև իրանց յաղթող ձևացնել։

Իմ «Խուժանապետներին»! յօդուածում չէր տրւած «արդի Դաշնակցութեան բիւրոկրատների» հասցէն, բայց և այնպէս սլաքը դիպել էր նպատակին։ Եւ ահա ըստ էութեան բան պատասխանելու փոխարէն, «Ալիքի» ղեկավարները փողոցային տղերանց նման, ըստ սովորութեան, կրկնում են նոյն հայհոյանքները, յաղթական ծամածռութիւններով ասում. «հը՞, վախեցար մեր անունը տալ, դէ փնա, յաղթեցինք, յաղթեցինք»... Խեղճեր...

Այդ փրկարար սրտահովութիւնը, ինչպէս և հայհոյական «բելլետրիստիկայի» մէջ անվերջ վարժութիւններ անելը թողնելով մեր երևելի գրական Հաջի-Բաբաներին՝ անցնենք. ես, նախ քան բուն հարցին դիմելը, հարևանցի կերպով ներկայացնեմ մի նոր զրպարտութիւն. իբր թէ ես այդ պարոնների արարքները սկսեցի մերկացնել միմիայն իմ անձնական հարցից յետոյ։ Թէ ես տարի ու կէս է բոլոր ժողովներում, պաշտօնական շէֆերի ներկայութեամբ, խիստ բացասական-քննական դիրք եմ բռնել դէպի այդ ազգային բիւրոկրատների տակտիկան և արարքները—այդ պէտք է որ, վերջապէս, քաղաքացիական քաջութիւն ունենան վկայել մեր այն ինտելիգենտները, որոնք տխուր դեր են ստանձնել լինել դաշնակցականների համար լոկ օգնութեան խողովակ։ Թէ մամուլի մէջ ես խիստ քննադատական-բացասական դիրք եմ բռնել դէպի դաշնակցութիւնը այն օրից, երբ ցենզուրական պայմանները փոփոխվեցան և ազգային բիւրոկրատները դուրս եկան կօնսպիրատիվ դիրքից հրապարակ, սեփական օրգան հիմնեցին, ցուցամոլական ռեկլամներ սկսեցին հրատարակել իրանց «շտաբի», «զօրքի», «կուռ ոյժի», դատաստանական, պաշարողական և այլն կարգադրութիւնների մասին տպած թռուցիկներով, հրամաններով և այլն—այդ պէտք է յայտնի լինի բոլորին, որոնք կարդում են «Մուրճ» ամսագիրը։ Հետևաբար, թէ ժողովներում և թէ մամուլի մէջ ես քաղաքական քաջութիւն եմ ունեցել չը ծածկել իմ համոզմունքները և կարծիքները։ Վեր կենալ այժմ խուժանին դրգելու համար բանը այնպէս ներկայացնել թէ ես հրապարակ եմ դուրս եկել իմ անձնական հարցից յետոյ—դա դիտաւորեալ ստախօսութիւն է. մի բան, որ դառել է երկրորդ բնոյթ ազգային բիւրոկրատների համար, շնորհիւ այն հանգամանքի, որ ինտելիգենտ խողովակները ներողամիտ քնքշութեամբ են վերաբերվել դէպի ձեր բոլոր պակասութիւնները և դուք երես էք առել։

Մի նմուշ էլ «Ալիքի» ղեկավարների լօգիկայից։ Եթէ դուք ասէք, օրինակ. «ռուս բիւրոկրատներ, ես այն էլ գիտեմ, որ դուք չէք տարբերում սպիտակը սևից, շունը գայլից և այլն»—մի՞թէ դա նշանակում է թէ ռուսները սև են կամ գայլեր են. իսկ «Ալիքի» խմբագիրը ընդունակ է այդպիսի լօգիկական սալտոմորտալների։ Չէ՞ք հաւատում. կարդացէք իմ «Ալիքի» մանեօվրները» յօդուածի վերջին պարբերութիւնը և տեսէք թէ ինչ պրովօկատորական մետամորֆոզի են ենթարկվում խօսքերս «Ալիքի» վարած բանակուի մէջ։ Ո՛չ պրովօկատորը այդ նախադասութիւնից պէտք է միայն եզրակացնի, որ ռուս բիւրոկրատները այնքան թիւր, տհաս, սխալ «հասկացողութիւն» ունեն, որ չեն զանազանում իրարից շատ տարբեր հասկացողութիւնները։ Այդ է պահանջում լօգիկան, որ պարտադիր չէ համարվում «Ալիքի» խմբագրութեան մէջ։

Լ. Սարգսեան

ՏՐՏՈՒՆՋՆԵՐԸ ԲԱՐՁՐԱՆՈՒՄ ԵՆ

Տարրականն ամենին հասկանալի է, որ կառավարելու համար անհրաժեշտ է կառավարվողի համակրութիւնն ու վստահութիւնը վաստակել։ Այդ միակ պայմանով ապահովվում է կառավարողի աջողութիւնը իր ձեռնարկութիւնների մէջ։

Այն օրերում—օրեր, որոնք մեր չարաղետ բաղդից տակաւին շարունակվում են—երբ ինքնապաշտպան լինելու համար ձեռքներս զէնքի առնելու հարկի տակ ընկանք, յառաջ անցաւ մեր միջից մի կազմ մարմին և իր կուրծքովը պատսպարեց աւերիչ, ապականիչ, արիւնկզակ և յափշտակիչ տարրերի դէմ—գայլային վոհմակներ, շղթայազերծ գազաններ, որոնց սրեցին ու բացթող արին մեր վրա դժոխային ոգիները։

Մեր անձնազոհ կորիճները արեան գնով վաստակեցին ժողովրդի հաւատը, սէրն և յոյսը։ Սա պատրաստ զգաց իրան իր շապիկը ծուէն-ծուէն պատառել իր կորիճների վէրքերին վիրակապ տալու։ Սա վա՜շ, վա՜շ էր գոչում և խնդումից աչքն արտասուալոռ կեցցէ էր գոչում դէպի սարալանջերը, ուր կռւում էին իր քաջերը, և դէպի խորաձորերը, ուր գլորվում էին նահատակները՝ յաւիտեան կանգնելու համար նրա յիշողութեան մէջ անմահ։

Այդպէս իրաւունք ձեռք բերելուց յետ, և երբ մեր նախնի քաջազունների դափնին աճեցնելուց դուրս էր բերվում մեր կորիճների ճակատը զարդարելու, այդ խրոխտապանծ հանդէսի հանդէպ և երբ կռիւների բոցն սկսած է շիջանել, ինչ թզուկային պարբերութիւն է կատարվում մարմրող բոցերի շառագոյն թևերանը, աղջամղջային լոյս ու մթի տակ։ Կուռ ասպարէզի վրա առաջին եղողները կամ, աւելի ճիշտ, նրանց հետ ապրախտանուածները ձգտում են խաղաղութեան ասպարէզի վրա էլ՝ ոչ միայն առաջին տեղը գրաւել, այլ մանաւանդ այդ ասպարէզի բացարձակ տէրը լինել, և իրանց կամքի տակ նուաճել ժողովրդի կամքը, ղեկավարել, կառավարել համայնքը, ազգը։

Ահա նրանք մեկնում են զինված ձեռքը համայնական ժողովների վրա և նոյն զինված ձեռքով գրաւում են ամենակարևոր հոգաբարձութիւնը և արշաւում են ամենուրեք բոլոր ճանապարհների վրա, որոնք տանում են դէպի կենտրոնական ժողովը։

Նրանք սեղմված շարքերից են խօսում, որ պաշտօնը ոչ միայն ձայնի մէջ է, այլև ձեռքի մէջ։ Նրանք այդպէս հրամայողաբար հարկադրում են ժողովրդի պատուիրակին ձեռնպահ մնալ քուէարկութիւնից։

Ժողովրդի համակրութիւնն ու լուծման ունէիք ձեր սուր հովանաւորութեան տակ, երբ ժողովուրդը ձեզ համարում էր ինքնապաշտպանութեան գնդերի սեղմված շարքերի մէջ։ Այժմ դուք սեղմված շարքերի կոչ էք անում ժողովրդական իրաւունքի, նրա ազատ կամքի ամրոցները գրաւելու։

Կարծում էք միթէ որ այս ամրոցներում աւելի թանկագին մի բան կը գտնէք, մի բան որ աւելի արժէ քան ժողովրդի համակրութիւնն ու լուծման։

Ընտրեցէք և ընտրվեցէք եթէ այս աւելի լաւ կը համարէք քան այն, որ կատարվում և կատարում են բարձունքների վրա մեր կորիճները. բայց եկէք ասպարէզ առանց բռնութեան և բռնահարութեան, այլ ազատ համոզմունքի և համոզելու զէնքով։ Հակառակ դէպքում ժողովուրդը ձեզ անդամ միայն ապստամբ կը համարէ բարձունքների վրա նահատակվող կորիճների հետ։

Տեսէք մանաւանդ որ ժողովուրդը ձեզ երկու տեղ չբաժանէ,—երկու կարգի չը վերածէ—բարձունքների վրա ինքնապաշտպանութեան համար նահատակվողների, և քաղաքների ու գիւղերի մէջ ժողովրդի ազատ կեանքն ու կամքը խեղդողների։

Հապա, եթէ հերիք չէք համարում պաշտպանութեան փառք գործը, այլ և կառավարել էք ցանկանում, ցանկանում էք ձեռքում առնել ու կառն տակ թղթապանակը (պորտֆէյլը) ունենալ, որպէս առաջին, այնպէս և այս երկրորդ դէպքում ձեզ անհրաժեշտ են ժողովրդի համակրութիւնն ու վստահութիւնը և... նաև լուծման։

Տրտունջները բարձրանում են՝ հօրիզոնից վեր շահատակող սև ամպերի նման. մրրիկը սպառնում է։ Յուսալ խաղացրէք խոհեմական իմաստութիւնը ամպրոպները ցրելու համար։

28 յուլիս Ա. Մ. Նիկեան

«ՊԱՐԼԱՄԵՆՏԱԿԱՆ» ԿՈՉՎԱԾ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(Պ. Տիգրան Յովհաննիսեանի բացատրութեան առիթով)

Կարդացի «Ալիքի» № 64-ում Ներսիսեան դպրոցի հոգաբարձական ընտրութեան պատգամաւորական ժողովի նախագահ պ. Տիգրան Յովհաննիսեանի բացատրութիւնը, ուղղված իմ հարցասիրութեանը Ներսիսեան դպրոցի գաւառական հոգաբարձու պ. Շ. Դեմիրճօղլեանի ընտրութեան վերաբերեալ։

Պ. Տ. Յովհաննիսեանը իր բացատրութեան մէջ փոխանակ իմ հարցասիրութեան մրտքին բաւարարութիւն տալու, ասում է. «Այդ ընտրութիւնը կատարվել է բոլոր իրապէս պարլամենտական երկրների ընտրական իրաւունքի մէջ ընդունված սկզբունքի հիման վրա, որին համապատասխանում է նաև Ներսիսեան դպրոցի ընտրութեան հրահանգը, իրաւունք տալով հոգաբարձուներ ընտրել անխտիր պատգամաւորների և ոչ պատգամաւորների միջից և որին չէ համապատասխանում ռուսաց գլխատ և պոչատ սահմանադրութեան ընտրական հրահանգը, թոյլ տալով Պետական Դումայի անդամ ընտրել միմիայն ընտրողների միջից։»

Ոչ ոք, պ. Տիգրան Յովհաննիսեան, չէ ժխտում, որ այդ ընտրութիւնը յենված է պարլամենտական երկրներում գոյութիւն ունեցող ընտրական սկզբունքի վրա. բայց այդ ընտրութիւնը համարես թէ նոյնքան «պոչատ» և «գլխատ» է, որքան է այդ կողմից ռուսաց սահմանադրութեան ընտրական հրահանգը։

Որովհետև այստեղ և այնտեղ թագաւորում է ոչ թէ իսկական ժողովրդի ձայնը, այլ իրանց ընտրական երկաստիճան սիստեմով ժողովրդի ձայնը, կենտրոնանալով մի քանի տասնեակ մարդկանց ձայների մէջ, խեղդվում է, և որոնք հեշտ կերպով կարող են ազդեցութեան տակ ընկնել և դաւաճանել իրանց սկզբունքներին, պատասխանատու չը լինելով ժողովրդի առաջ իրանց ընտրած մարդկանց գործունէութեան համար։

Այս տեսակէտից էր, որ Դաշնակցութիւնը բօյկօտի ենթարկեց ռուսաց այդ «պոչատ» և «գլխատ» սահմանադրութիւնը։ Եթէ Դաշնակցութիւնը հետևողական լինէր իր քայլերի մէջ, նա չը պիտի մասնակցէր իրապէս ոչ Ներսիսեան դպրոցի հոգաբարձական և ոչ էլ այժմեան Էջմիածնի եկեղեցական-սահմանադիր ժողովին—«պարլամենտական» ընտրութիւններին։

Ուրեմն պարզ է, որ, երբ ընտրութիւնները կատարվել են երկաստիճան ընտրական սիստեմով, այստեղ խօսք անգամ չէ կարող լինել, թէ այդ ընտրութիւնները խարսխված են դեմօկրատական սկզբունքների վրա։ Այդ իսկ պատճառով, ինչպէս նկատել է պ. Տիգրան Յովհաննիսեանը, ես հեգնել էի Ներսիսեան դպրոցի հոգաբարձական ընտրութեան պատգամաւորական ժողովը «ժողովրդի անունից խօսող և նրա իրաւունքների պաշտպան հանդիսացող» խօսքերով։

Եւ մի՞թէ ճշմարիտ չէ, ուղիղ չէ, որ Ախալցխայի և Ախալքալաքի ժողովրդի ձայնը ճնշումի է ենթարկվել պատգամաւորական ժողովի կողմից, և մի՞թէ այդ դուք կողմնակի կերպով չէիք նկատած։

Համոզված եղէք, պ. Տիգրան Յովհաննիսեան, որ եթէ ընտրութիւնները կատարվէին դեմօկրատական սկզբունքի հիման վրա ուղղակի ձայնատուութեամբ, պ. Շ. Դեմիրճօղլեանը դժուար թէ ընտրվէր Ախալցխայի և Ախալքալաքի գաւառների կողմից Ներսիսեան դպրոցի հոգաբարձու։ Ես հաստատ համոզված եմ, որ 60 հոգի պատգամաւորներից հազիւ մի քանիսը ճանաչէին պ. Շ. Դեմիրճօղլեանին ժառիկից այնպէս, ինչպէս նրան ճանաչում է Ախալքալաքի գաւառը. ուրեմն այստեղ չէ կարող ընտրութիւնը լինել գիտակցական, այլ պատահական։

Քանի որ կը լինի Դաշնակցութեան բռնի ճնշումը, երբէք մեզանում չէ կարող գոյութիւն ունենալ «պարլամենտական» ընտրութիւն, այդ բառի եւրոպական իմաստով, այլ գոյութիւն կունենայ «դաշնակցական» ընտրութիւն, որովհետև բռնի ոյժի առաջ տեղի են տալիս հասարակութեան դեմօկրատ և բանիմաց մասը։

Օրինակները շատ են. թերթեցէք հայկական պարբերական հրատարակութիւնները։ Ահա թէ ինչ տեսակէտով էի առաջնորդվել և ձեզ հարցնելու, թէ՝ «որ ընտրական իրաւունքի հիման վրա է կատարվել այդ ընտրութիւնը»։ Բայց դուք խորհուրդ էիք տալիս, «Նախ քան ժողովրդի անունից խօսող և նրա իրաւունքների պաշտպան հանդիսացող պատգամաւորական ժողովը» հեգնելը, նեղութիւն կրէի հարցնելու «ընտրական իրաւունքի և սկզբունքների մասին տարրական գաղափար ունեցող մի անձնաւորութեան»։ Եւ այդ անձնաւորութիւնը ներկայիս հանդիսացաք դուք, որ «բացատրեցիք» բոլոր իրապէս «պարլամենտական» երկրներում ընդունված ընտրական իրաւունքը։ Շնորհակալութիւն. աւելացնելով հանդերձ, որ դուք էլ ունենայիք այնքան տարրական քաղաքացիական քաջութիւն և դեմօկրատական ընդունակութիւնների տարրական հասկացողութիւն, որ փոխանակ նախագահելու այդ տեսակ ժողովների, բողոքէիք զանազան բռնի և ապօրինի միջոցներով ընտրված պատգամաւորների և հոգաբարձուների ընտրութեան դէմ։

Էն-էն

Ախալքալաք.

ԳԱՆՁԱԿԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Յուլիսի 27-ին

Ինչպէս պատմեցին, ոստիկանութիւնը խուզարկել է Թուրքաց գրադարան-ընթերցարանը և գրաւել է մի քանի արգելված լրագիրներ և հակակառավարչական բովանդակութիւն ունեցող թռուցիկներ։ Ինչպէս լսեցինք ձերբակալված է Ասլան-բէգ Սաֆի-Քիւրդլին, որը Թուրք գործողների մէջ առաջնակարգ տեղն է բռնում և ըստ ոմանց մի լուսամիտ անձ է...

Ինչպէս երևում է, Շուշում կատարված ցաւալի դէպքերը շատ վատ տպաւորութիւն են թողել տեղիս Թուրք ազգաբնակութեան վրա և նրանց պարոններից ուղղակի «զահար է» թափված։ Թուրք խուլիգան տարրը այդ տպաւորութիւնը փոխելու համար հետևեալ միջոցին է դիմել. Երէկ գիշեր կազմել են հայրենասիրական ցոյցեր, գոռալով, գոչելով, կառքերով ամբողջ անցնելով բոլոր փողոցներով՝ ժողովրդին աւետել են, որ Թուրքերը Շուշում տարել են յաղթութիւնը, կոտորելով բոլոր հայերին և հայոց մասը հողի հետ հաւասարեցրել... Ասում են, ոստիկանութիւնը արգելել է հայրենասիրական ցոյցերն աւելի մեծ ծաւալ ստանալը և ցուցարարներից մի քանիսը ձերբակալված են։

Թուրքերի հոգեբանութեան հետ ծանօթ անձինք այն կարծիքի են, որ եթէ Շուշում Թուրքերը պարտութիւն կրած չը լինէին,—կոտորածը Գանձակում անխուսափելի էր լինելու։

Ինչպէս մեզ պատմեց մի Թուրք, կարգադրված է, որ 5 օրվայ ընթացքում բոլոր քոչուորները վերադառնան իրանց տները։ Քոչուորները տենդային արագութեամբ սարերից վերադառնում են։ Թուրքերը մեծ քանակութեամբ հացահատիկ են ամբարում սարահարթերում ապրող Թուրք գիւղերում։

Թուրք ազգաբնակութիւնը շարունակում է իր միանգամայն անմիտ և վնասաբեր բօյկօտը. մինչև օրս կայարանում հնարաւոր էր Թուրք խանութպաններից մի բան առնել, ներկայումս այդ ևս խստիւ արգելված է։

Պէտք է ասել, որ իշխանութիւնը մինչև օրս ոչ մի փորձ չէ արել այդ տնտեսական և թշնամութիւնը երկարացնող միանգամայն անմիտ ու վնասակար բօյկօտի առաջն առնելու։

Հայերի և Թուրքերի յարաբերութիւնն այսքան ժամանակ լարված դրութեան մէջ չէր մնայ, եթէ նրանք հնարաւորութիւն ունենային իրար հետ շփվելու և իրարից առևտուր անելու։ Բօյկօտն երկու հարևան ազգերին մշտական լարված դրութեան մէջ պահող առաջնակարգ միջոցներից ամենաառաջինն է. այդպէս է ցանկանում Ալեքբէր-բէգը և նրա ասած խօսքը մի պատգամ է իւրաքանչիւր մահմեդականի համար...

Հայ խանութպանները, հակառակ ազգաբնակութեան մեծամասնութեան ցանկութեան, շարունակում են զինւորների միջոցով զանազան «քալ ու քուլ» բերել տալ Թուրքերից։

Թուրքերը բօյկօտ են արել նաև իրանց բարեկամ գերմանացիների դէմ. այլ ևս գերմանացիներին հացահատիկ չեն վաճառում։

Գերմանացիները, լուրն առնելուն պէս, զօղանչեցնում են եկեղեցու զանգակները ու մի բազմամարդ ժողովում որոշում կայացնում՝ Ռուսաստանից իրանց համար հացահատիկ հոգալ քաշել։

Հայերն այս օրինակից պիտի ամաչէին և օրինակ վերցնէին գերմանացիների միաբանութիւնից։

Մեր «դին-այրի» զարդաշները, ինչպէս ասած վնգվնգում են որ և է ընդհարումի պատճառ առաջ բերելու։ Նրանք պօստի ճանապարհին նշանակում են մի քանի փողոցային երեխաներ, որոնք հայհոյում են անց ու դարձողներին։ Եւ երբ այդ լակոտները տեսնում են, որ իրանց պատասխան տուող չը կայ, սկսում են սուտ սուտ բարձրաձայն լալ ու բղաւել՝ թէ հայը խփեց։

Նրանք չեն խնայում նոյն իսկ հայ քաղաքացուն. անցեալ շաբաթ այդպիսի դէպքից քիչ էր մնում պօստի ճանապարհին քաղաքապահի և Թուրքերի միջև ընդհարում ծագէր, բայց վրա հասնող զինւորները առաջն առնում են։

Մի բազմակողմանի փորձված, բայց կոտորածին հակառակ Թուրքին—իմ հարցին թէ Գանձակում կոտորած կը լինի՞ թէ ոչ։

—Եթէ ինձ հարցնես՝ չի լինի, բայց եթէ մեր շանը... հարցնես, ասում է՝ կոտորած կը լինի։ Եւ ցաւօք սրտի միշտ նրանց ասածն է լինում։

«Մեր և սիւննիների մէջ իմամիների կոտորելուց առաջացած թշնամութիւնից 100 տարիներ է անցել, դեռ թշնամութիւնը մնում է. դուք ուզում էք մի օրումը թշնամութիւնը չքանայ—աւելացնում է խօսակիցս...—այդ չի լինի. բայց իշխանութիւնը կարող է առաջն առնել...

Ա. Սահակեան

ՈՒՍՈՒՑԻՉԸ ՉԸ ՊԻՏԻ ԿԵՂԾԷ

Անշուշտ, կասեն ամենքը։

Այո, պիտի անկեղծ լինի և մինչև իսկ աւելի քան անկեղծ։ Նա պիտի պարզ խօսի, ճիշտ և մէկին։ Պարզութիւնն ու ճշտութիւնը նրա էական յատկանիշներից պիտի լինեն, առանց որի նա կասէ մութ, անորոշ բաներ։

Մթութիւնն ու անորոշութիւնը մութ ուժերին են յատուկ։

Անորոշ և ոչ պարզ խօսողը սխալանքի մէջ կը գցէ և կը մոլորեցնէ դիմացինին՝ լինի այդ դիմացինը աշակերտ, թէ մի այլ ոք։

Երևանի թեմ. դպրանոցի համար ուսուցիչներ են հարկաւոր։ Այդ մասին յայտարարութիւն կայ։ Ուստի և զանազան կողմից ուսուցիչներ խնդրագրով դիմում են հոգաբարձութեան։

Նրանք ուզում են դասել։

Եւ որպէս զի նրանց ուզածը կատարվի, հարկաւոր է, որ նրանց ճանաչեն։ Ճանաչվելու համար նրանք գրում են և իրանց «ցուցակ ծառայութեանը»։ Դրա մէջ լինում է նաև այն, թէ որտեղ կամ ինչ են սովորել։

Ահա այստեղ է հարկաւոր, որ ուսուցիչը ճիշտ խօսի և ամէնը պարզ գրէ։

Մենք պատահմամբ աչքի անցրինք 60-ի չափ խնդրատու ուսուցիչների գրութիւնները և ցաւելով նկատեցինք, որ դրանց թւում կան մարդիկ, որոնք իրանց «ծառայութեան ցուցակը» կամ ինչ լինելը պարզ չեն գրել, ճիշտ չեն գրել։

Դա լաւ բան չէ։

Ուսուցչին վայել գործ չէ։

Մենք առանձին զգուշութեամբ ենք արձանագրում այս փաստը, որովհետև գործող անձը ուսուցիչն է, այն էլ հայ ուսուցիչը...

Wir sollen sein wie wir sind, oder wir sollen nicht sein!

Չը պէտք է կեղծել...

Այսպէս պարտաւոր են անել բոլոր մարդիկ։ Իսկ ուսուցիչը՝ ամենից առաջ։

Յ. Թագէոսեան

Երևան

ՀԵՐՑԵՆՇՏԷՅՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

(Նամակ Մոսկվայից, յուլիսի 24-ին)

Ինչպէս ընթերցողներին յայտնի է, Տէրիօքում, ամսիս 18-ին, չարագործի ձեռքից մահացաւ Պետական Դումայի նախկին անդամ Միխ. Եակ. Հերցենշտէյնը։

Հանգուցեալը մէկը լինելով այն մարդկանցից, որոնք իրանց կեանքի ամենալաւ տարիները ծառայեցնում են հասարակութեան շահերին և գիտութեան առաջխաղացութեան գործին, թոյլ ենք տալիս մեզ մի քանի տող նուիրել նրա փառաւոր և նշանաւոր անուան։

Միխ. Եակ. ծագումով հրէայ է. իր համալսարանական կրթութիւնը ստանալով Օդեսսայում, որտեղ ժամանակին յետոյ նա նուիրվեց կրթական և հասարակական գործին։ Այսպէս, նա Մոսկվայի համալսարանի պրիվատ-դոցենտ և Մոսկվայի գիւղատնտեսական ճեմարանի պրոֆեսոր էր. ապա նա վարել է իրաւասուի պաշտօն Մոսկվայի քաղաքային ինքնավարութեան և գեմստոյի մէջ։

Նա իր կեանքի ամենափայլուն տարիները անց է կացրել իր պաշտօններից դուրս, հասարակական ու քաղաքական մթնոլորտում, և այդ ասպարէզներում նա բաւական խոշոր և համակրելի դեր էր խաղացել։ Նա, որպէս ֆինանսիստ և ագրարային խնդիրներին քաջ ծանօթ անձնաւորութիւն, յայտնի էր Ռուսաստանի լաւագոյն հասարակութեան և Եւրոպային։ Ով պարբերաբար հետևել և կարդացել է Պետական Դումայի նիստերի արձանագրութիւնները, այդպիսին գիտէ, թէ նա որպիսի կրակոտ ու այրող ճառեր էր արտասանել ռուսական ագրարային և ֆինանսական հարցերի մասին, և թէ որպիսի հետաքրքրութեամբ լսվել և ընդունվել է ռուս հասարակութեան և առաջնակարգ մամուլի կողմից։ Նրա իւրաքանչիւր խօսքը, իւրաքանչիւր պարբերութիւնը մի մի փուշ էր նրա հակառակորդների համար, որոնք տանել այդ չէին կարող։ Ճիշտ է, հանգուցեալը գիտէր և շատ լաւ զգում էր այդ բոլորը, գիտէր և՛ այն, որ իրան մահ է սպառնում, բայց նա, որպէս ժողովրդի ներկայացուցիչ, մինչև իր մահվան վերջին բոպէն հաւատարիմ մնաց ժողովրդական սկզբունքներին ու պահանջներին։ Նա չը դաւաճանեց իր ժողովրդին. նա մահը կեանքից գերադասեց։

Եւ այսօր նա ընկաւ իր հակառակորդի գնդակից, սպանվեց վարձկան մարդասպանի ձեռքով։ Նրա թշնամիները, յանձին Գրինգմուտի, Սուվորինի, Շմակովի և այլոց, այսօր կերախում են սարքում՝ հրճվում և զմայլվում անմեղ մարդու թափված արիւնով։ Սակայն... այդ ոչինչ, յաղթանակը ժողովրդի մեծամասնութեան կողմն է...

Որքան որ Միխ. Եակ.-ի մահը զգալի և ողբալի է ամբողջ Ռուսաստանի մտաւոր դասակարգի համար, նոյնքան էլ նա ծանր ու վշտալի է Մոսկվայի համար։ Հանգուցեալը իր կեանքի մեծ մասը ապրելով մայրաքաղաքում, նա գրեթէ իր փառաւոր գործունէութեամբ աչքի է ընկել Մոսկվայում, ուր նա շատ բան է արել։

Նա մայրաքաղաքի հասարակութեան սիրելի դարձաւ այն ժամանակից, երբ Պետական Դումայի ընտրութիւնների մէջ նրա թեկնածութիւնը առաջ քաշվեց, և որ ընտրողների մեծամասնութեամբ Պետական Դումայի անդամ ընտրվեց։ Նրա բեղմնաւոր ու արդիւնաւոր երկու և կէս ամսվայ գործունէութիւնը Պետական Դումայում ամենքին է յայտնի։ Այդ ժամանակից, նա սիրելի և համակրելի դարձաւ ամենքին՝ ռուս պրոլետարիատին և գիւղացիութեան մանաւանդ, ինչպէս և ռուս լաւագոյն հասարակութեանը ընդհանրապէս։

Ցաւակցական բազմաթիւ հեռագիրներն ու նամակները, որ ուղղվում են հանգուցեալի այրուն, և ռուսական լրագիրները բաւական պերճախօս փաստ են այն սիրոյ ու համակրանքի, որին նա իսկապէս արժանի է։ Ամեն կողմից ցաւել ու լալ, վշտանալ և ողբալ հանգուցեալի մահը, այդ արդէն ցոյց է տալիս, թէ այդ անձնաւորութիւնն որպիսի բարեմասն յատկութիւններով և խոշոր ընդունակութիւններով է օժտված եղել։

Հանգուցեալը, չը նայած որ զանազան պատճառներով ժամանակաւորապէս թաղվեց Տերիօքում, ուր սպանվել էր, բայց կը գայ ժամանակ, երբ նրա մարմինը կը փոխադրվի Մոսկվա, իր սիրած ու պաշտած տեղը, և վերջնականապէս այստեղ կը թաղվի։ Իսկ այդ կը լինի միայն այն ժամանակ, երբ, ինչպէս Րոդիչևն է ասել, «Ռուսաստանում կը թագաւորէ ազատութիւն, այն ժամանակ կերթանք նրա յետևից»։

Այո, այն ժամանակ Մոսկվան կերթայ իր ներկայացուցչի յետևից և ռուսական պարլամենտի առաջին զոհին կամփոփէ իր հարազատ գրկում...

Եզրափակելով մեր երկտողը, թոյլ ենք տալիս մեզ վերջացնել Մոսկվայի համալսարանի ռեկտոր պ. Ա. Մանուիլովի խօսքերով թէ «խելօք, տաղանդաւոր և գործունեայ աշխատաւորը այլևս չը կայ։ Ռուսաստանը զրկվեց իր անձնուէր և փառաւոր զաւակներից մէկից։ Նա իր ամբողջ կեանքը տուել է իր հայրենիքի վերածնման գործին և դրա հետ կապել է իր անունը։ Այդ անունը չի մոռացվիլ»...

Ցիրաւի, որ Հերցենշտէյնը չէ մեռել, նա կենդանի է և կենդանի էլ կը մնայ Ռուսաստանի լաւագոյն հասարակութեան մէջ...

Հանգիստ նրա բեղմնաւոր աճիւնին...

Ոսկու-Ջօն

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, յուլիսի 29-ին

Թիֆլիսի Հայ Յեղ. Դաշնակցութեան ագենտները ու զինուորները այս վերջին շաբաթում, օրվայ որ ժամանակին կուզէք, խումբով և զատ-զատ իրանց զինմթերքով խնդրում են ծախ գրել եկեղեցու ծխականների ցուցակում, և քահանաների մի քանիսի հարցմունքին, թէ ինչ գործի կամ պարապմունքի էք և որտեղ է ձեր բնակութեան տեղը, պատասխան է տրվում. «Հարցրէք «Ալիքի»-ի խմբագրատանը»...

Քահանայ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը իր վերջին, արտակարգ նիստում, յուլիսի 28-ին, առնելով Ա. Ահարոնեանի հրաժարումը տեսչական պաշտօնից, տեսուչ ընտրեց Պ. Մելիքեանին։

—

Ջէվանշիրի գաւառից մեզ հաղորդում են, որ Խանալղա ստանում, յուլիսի 20-ին, 12 զինված Թուրքեր յարձակվել են սայլով անցնող 3 հայերի վրա և սպանել նրանց։

—

Ջէվանշիրի գաւառից մեզ հաղորդում են, որ յուլիսի 20-ին Մէյդիմը գիւղի մօտ 3 կօզակների և մի քանի անյայտ չարագործների միջև հրացանաձգութիւն տեղի ունեցաւ, որի ժամանակ սպանվեց Խօրուզլի գիւղացի Իսմայիլը։ Ոստիկանութիւնը և կօզակները հետևել են չարագործներին. նրանց աջողվել է ձերբակալել կասկածելի 8 մահմեդականների, որոնցից խլեցին մաուզերի սիստեմի հրացաններ և փամփուշտներ։

—

Բաթումից մեզ գրում են, որ մօտ օրերս այստեղ չորս անյայտ չարագործներ, ատրճանակներով զինված յարձակվել են շոգենաւային և ապրանք տեղափոխելու Ռոսսիյսկի ընկերութեան գրասենեակի վրա և ծառայողներին վրա ատրճանակով սպառնալով, փող պահանջել, բայց ծառայողները չը կորցրին իրանց և պատրաստակամ դիմադրութիւն ցոյց տալ, որից յետոյ կողոպտողները դուրս վազեցին և փախան, ոչինչ չը վերցնելով իրանց հետ։

—

Յուլիսի 27-ին, ճանապարհորդ Ա. Թ., երկաթուղուց քաղաք գալիս, Միքայէլեան փողոցում, փոստատան մօտ, զինուորների (պատրուլի) կողմից ենթարկվում է խուզարկութեան, որի ժամանակ ճարպիկ զինւորը հանում է պարոնի գրպանից ժամացոյցը։

—

Վ. Գունիան դիմել է նահանգապետին, խնդրելով թոյլ տալ իրան հրատարակելու Թիֆլիսում վրացերէն լեզուով երգիծաբանական պատկերազարդ մի շաբաթաթերթ «Նիշադուրի» (Նիշադիր) անունով։ Շուշեցի Լևոն Տէր-Յովհաննիսեանը թոյլտւութիւն է ստացել հրատարակելու Թիֆլիսում ռուսերէն լեզուով մի ամենօրեայ լրագիր «Тифлисскій Телеграфъ» անունով։

—

Բաքուի ընդհանուր-նահանգապետի կարգադրութեամբ դադարեցված «Бакинская Газета» լրագրի նախկին խմբագիր Բէգզօվը, որ բանտարկված էր Բաքուի նահանգական բանտում, իր եօթնօրեայ պատժի ժամանակամիջոցը լրացնելով, արձակվել է բանտից։ («Каспій»)։

—

Նոբելի և Ռոտշիլդի Բաքուի նաւթահանքերում գործադուլը շարունակվում է։

—

Գանձակից գրում են «Т. Л.» լրագրին. «Բօյկօտը, որը նոյեմբեր ամսից Գանձակի ազգաբնակութեան երկու մասին էլ յայտարարեցին միմեանց, առայժմ չէ վերացվել։ Հայոց մասում դրութիւնը անտանելի է։ Չարչիները, օգտվելով դէպքից, կենսական մթերքների գները չափազանց մեծացրին։ Բօյկօտ յայտարարելով, Թուրքերը անպայման ահագին վնասներ կրեցին, բայց վնաս հասաւ նաև հայերին, որովհետև այժմ այնպիսի ժամանակ է, երբ Անդրկովկասի ազգաբնակութիւնը, մանաւանդ աղքատ աշխատաւոր մասսան, առանց այդ մթերքների չէ կարող կառավարվել։

—

Յուլիսի 27-ի լոյս առաւօտեան իմացվեց, որ Ղազախի բանտից փախել են 5 յայտնի Թուրք աւազակներ. պահապան զինուորները շտապով ընկնում են փախստականների ետևից և ¼ վերստի հեռաւորութեան վրա, քաղաքի մէջ, երկուսին գնդակահարում են, իսկ երեքին կալանաւորում և կրկին բանտ բերում։

—

«XX Вѣкъ» լրագրին հեռագրում են. Սիմբիրսկում, տօնավաճառի ժամանակ, ընդհարում տեղի ունեցաւ ստրաժնիկների հետ։ Ոստիկանները տանում էին ձերբակալվածին։ Ամբոխը, սպառնալով ամբակոծել ոստիկանատունը, պահանջեց բաց թողնել նրան։ Կանչված ստրաժնիկները օգտում մի քանի անգամ համազարկ արձակեցին։ Նրանց պատասխանեցին կարկուտի պէս քարեր շպրտելով։ Ամբոխը ցրվեց մտրակներով։ Երկու կողմից էլ վիրաւորվածներ շատ կան։ Ոստիկանները զինված են հրացաններով։

—

Ներքին գործերի մինիստրութիւնը, իբրև հաստատութիւն իր, Պետական Դումայի նախկին պատգամաւորների վերաբերեալ շրջաբերականի, շրջաբերականով յայտնեց բոլոր նահանգապետներին, որ հէնց որ նրանք իմանան որ Պետական Դումայի անդամներին բանտարկել են, նրանք պարտաւոր են անձամբ ծանօթանալու բանտարկելու գլխաւոր շարժառիթների, պատճառների և հետևանքների մասին և անյապաղ արձակել այն բոլոր նախկին պատգամաւորներին, որոնց ձերբակալելու և բանտարկելու համար հիմնաւոր պատճառներ չեն եղել։

—

ՄՕՍԿՎԱՅԻՑ մեզ գրում են. «Պետերբուրգի քաղաքական գործադուլի ազդեցութեան տակ, տեղս յաճախ լուրեր են պտտվում, թէ շուտով Մոսկվայում ևս գործադուլ կը հրատարակվի։ Մենք անհաւանական ենք համարում այդ։ Մօտ ապագան ամեն ինչ կը պարզէ»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԿԱՐԻՉ ՄԱԽՈԽԵԱՆԻ ՆԿԱՐԸ

Բեռլին, յուլիսի 24-ին (ն. տ.)

Բեռլինի այս տարուան գեղարուեստական ցուցահանդէսը, որ մայիս ամսէն սկսեալ բացուած է, կը ներկայացնէ, բացի նոր նկարիչներու գործերէ, բազմաթիւ գլուխ-գործոցներ, որոնք գերմանական նշանաւոր գեղարուեստագէտներու լաւագոյն արտադրութիւններն են, երևան եկած վերջին հարիւր տարուան ընթացքին։ Այս վարպետներու նկարներու ձօն հաւաքածոն պատճառ եղած է, որ տեղի պակասութեան համար, ուրիշ տարիներէ շատ աւելի քիչ թուով, նոր նկարիչներու գործերէն ցուցադրուած ըլլան։ Jury-ի խիստ քննութիւնը այս անգամ երևան բերած է իրօք օրինակելի յարգարում մը և այս հանգամանքին կը պարտի ցուցահանդէսը այն պարզան, որ ուրիշ տարիներէ աւելի այցելուներ, մանաւանդ լաւագոյն դասակարգի պատկանող ընտանիքներ, ժամերով կը շրջագային գեղարուեստահանդէսի սրահները և մեծ հաճոյքով կը վայելեն ընծայուած արուեստին նրբութիւնները։

Ուրախալի է, որ հակառակ կատարուած խիստ քննութիւններու, այս տարի ևս ծանօթ հայ նկարիչ պ. Վարդան Մախոխեան կրկին յաջողած է իր մեծադիր մէկ պատկերը, գեղեցիկ ծովանկար մը Capri կղզիէ տեսարաններէն, ընդունիլ տալ jury-ին որ ո՛չ այնչափ սիրով կուզէ միշտ օտարականներու գործերը քաջալերել։ Պաշտօնական քաթալօգին մէջ, Capri (Monacone) նշանակուած է այս հիանալի իւղանկար պատկերին համար, որու առջև մարդ ինքնաբերաբար կը զգայ կապոյտ, ընդարձակ ծովին անհուն հանդարտութիւնը և զովութիւնը։ Երկու հազար մարք գինը նշանակուած է Մախոխեանի այս գործին համար, և մեծ ուրախութեամբ կը տեսնեմ, որ արդէն պատկերին կցուած է նշանակ մը, որու վրա «ծախուած» բառը կը կարդացուի։ Ինչպէս կը տեղեկանամ, մէկ քանի անուանի պատկերազարդ թերթերու մէջ Մախոխեանի նկարը պիտի արտատպուի քիչ ատենէն։

Անկարելի է երիտասարդ հայ գեղարուեստագէտը չը շնորհաւորել սրտանց այս փայլուն յաջողութեան համար և ա՛լ աւելի առաջդիմութիւն չը մաղթել։ Մեր հռչակաւոր Այվազովսկիին արժանաւոր յաջորդ մը կրնայ ըլլալ ինքը մօտաւոր ապագային, եթէ լուրջ ու տևական ջանքերով շարունակէ իր աշխատութիւնները։

Հ. Ա.

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

28 յուլիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 յուլիսի։ Վախճանված երդուեալ-հաւատարմատար Մարգօլինի տեղ փոխ-ծովակալ Նեբօգատովի գործը վարելու է երդուեալ-հաւատարմատար Կարաբչէվսկին։—Հրատարակված Բարձրագոյն հրամանագրութեամբ Խերսոնեսյում նշանակվում են անհնկալ յանձնարարութիւնների համար պաշտօնեայ և քարտուղար. հաստատվում է նաև գեներալ-հիւպատոսութիւն Ռուսաստանի կողմից։

ԽԱՐԿՕՎ, 28 յուլիսի։ Գործադուլ արին Հէլֆերիխի մեքենականոյց գործարանի բանուորները։ Գործադուլները կանգնեցրին էլեկտրական երթևեկութիւնը և աշխատեցին դադարեցնել նաև ձիաքարշի երթևեկութիւնը, սակայն վրա հասած կօզակները արգելեցին։ Քաղաքում հանգիստ է։

ՄՕՍԿՎԱ, 28 յուլիսի։ Երէկ ոստիկանութիւնը փակեց կադետների երեք բաժինների ժողովը։ Ժողովը վճռեց բողոք ուղարկել։

ՎԱՐՇԱՎԱ, 28 յուլիսի։ Պետերբուրգի երկաթուղու գծի վրա ձերբակալված են օրավարձով աշխատող բանուորները. նրանց փոխարինել են 100 զինուորներով։

ՎԵՐԽՆԵ-ՈՒԴԻՆՍԿ, 28 յուլ.։ Սլիւսէնկօ կայարանում կողոպտել են երկաթուղային դրամատարին, որից խլել են 95,000 ռուբլի։ Արձակած գնդակից վիրաւորվել են մեքենավարը և մի չերքեզ։ Կողոպտումը վերագրում են չերքեզներին։

ՄՕՍԿՎԱ, 28 յուլիսի։ «Ռուս մարդկանց դաշնակցութեան» նախագահը ստացել է մի գրութիւն, որով Դանիլովի գործարաններից երկուսի բանուորները յայտարարում համաձայնվում են մտնել դաշնակցութեան մէջ՝ ընդհանուր քաղաքական և տնտեսական գործադուլներին չը մասնակցելու դիտաւորութեամբ:

ԲԵՐԼԻՆ, 28 յուլիսի: Ալէութիան կղզիներում պատահած ճապօնա-ամերիկական միջնադէպը երկիւղի տեղիք չէ տալիս. սակայն կառավարութիւնը ուշի ուշով հետևում է նրա հետևանքներին, որովհետև ամերիկացիները, ներողութիւն չը խնդրելով, կամենում են սոսկ ցաւակցութիւն յայտնելով բաւականանալ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 յուլիսի: Յուլիսի 24-ին մատակարարական հարցով զբաղվող ժողովը որոշել է 2,264,233 ր. փոխառութիւն բաց թողնել: Մատակարարական ընկերութեան վերջնական ծրագիրը քննվելու է օգոստոսի ամսին մի առանձին խորհրդակցութեան մէջ՝ զեմստվօների, առևտրի, արդիւնաբերութեան և զանազան այսօրինակ հաստատութիւնների ներկայացուցիչների մասնակցութեամբ:

ԿՐՕՆՇՏԱԴ, 28 յուլիսի: Զինուորական դատարանը արդէն բաւական նիւթեր է ժողովել ապստամբութեան վերաբերեալ և պարզել է անմիջական մասնակցութիւն ունեցած բոլոր անձանց ազգանունները, թէ սխալական հետազօտութեամբ և թէ հիմնվելով վկաների ցուցմունքների վրա:

Պրոֆէսօրների մի խումբ Պետերբուրգում կազմակերպելու է համալսարանային մասնաւոր դասընթացքներ, պատմա-լեզուաբանական և իրաւաբանական ֆակուլտէտներին կից: Ուսումը լինելու է 4-ամեայ. դասախօսելու են Գրիմ, Գրէվս, Պօկրօվսկի, Հէսսէն, Նօվօգօրօդցէվ. Հաւիֆման և Սարուվէ պրոֆէսօրները:

ՍՄՕԼԷՆՍԿ, 28 յունիսի: Ձերբակալված են 5 յեղափոխականներ. գտնված են հեկտօգրաֆ շատ թռուցիկներ, արձանագրութիւններ և հասցէներ Սմօլէնսկի սօցիալ-դէմօկրատական կուսակցութեան: Կասկածում են, որ ձերբակալվածներից մէկը պատկանում է ահաբեկիչ (տերրօրիստ) կազմակերպութեան:

29 յուլիսի

ՎԱՐՇԱՎԱ, 28 յուլիսի: Երէկ երեկոյեան Գօրնայեա կոչված փողոցում 5 չարագործներ կրակում էին պահակախմբի վրա, որ բաղկացած էր էր մի ունտէր-օֆիցէրից և երեք զինուորներից, որով սպանեցին ունտէր-օֆիցէրին: Զինուորները պատասխանեցին նոյնպէս կրակելով և սպանեցին չարագործներից մէկին, մնացածները փախան:

ԿԻԷՎ, 28 յուլիսի: Երէկ երեկոյեան մօտ 20 զինված չարագործներ յարձակվեցին քաղաքից 5 վերստ հեռաւորութեամբ ամառանոցային գնացքի վրա, խլեցին ճանապարհորդներից փողերը և արժէքաւոր իրերը, իսկ կօնդուկտօրից օրվայ ստացածը և անյայտացան:

ԲԵՐԼԻՆ, 28 յուլիսի: Գործադուլ արին բանակիրները, կառապանները: Իւրաքանչիւր կառք պաշտպանվում է մի ոստիկանով: Ամբոխը կառքերին ուղեկցում է սուլոցներով և հայհոյանքներով:

ԿՕՎՆՕ, 28 յուլիսի: 12 յեղափոխականներ գրաւեցին Բերեզօվսկու տպարանը և մտադիր էին տպել Վիբօրգեան կոչը, երբ յարկարծ հասաւ ոստիկանութիւնը, յեղափոխականները ցրվեցին: Նրանցից մէկը՝ հրէայ Ներիաշակին բռնվեց: Նրա բնակարանում գտնված են բազմաթիւ անլէգալ գրվածքներ, կարմիր դրօշակներ և միմէօգրաֆ:—Կօման գիւղաքաղաքում, Մօշկօ գիւղի բնակիչները ահագին ամբոխով սկսեցին ծեծել Գրիզա անունով մի հրէայի, կասկածելով ձիագողութեան մէջ: Օգնութեան հասաւ հրէաների մի մեծ ամբոխ և սկսեց տրճանակներ պարպել գիւղացիների վրա: Ոստիկանութիւնը միջամտելով կարգը վերահաստատեց. մահացու վիրաւորված է մի գիւղացի:

ԲԵՐԼԻՆ, 28 յուլիսի: «Ձիւդէյտշէբէյլսհօր» թերթում տպված է պաշտօնական մի գրութիւն, որ ասում է, թէ Պարիզի լրագիրները շարունակում են իրանց առաջնորդող յօդուածներում քննադատել Գերմանիայի՝ Ռուսաստանի վրա արած յարձակումները: Գերմանիայի այդ ինսինուացիաները վնաս չեն կարող հասցնել, բայց ռուս կառավարութեան երդուեալ թշնամիների ձեռքում գործիք են ծառայում: Ռուսաստանի յեղափոխական շարժումը մինչև այժմ աջակցութիւն չէ գտել ազգային զգացմունքի տարերային ուժի կողմից: Յեղափոխականների մի քանի շրջաններում, ըստ երևոյթին կարծում են, թէ Գերմանիան կօգնէ փոթորիկ բարձրացնելու. բայց նրանք իրանց հաշիւների մէջ սխալվում են:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 յուլիսի: Ներքին գործերի մինիստրութիւնը մի հրամանագրութեամբ առաջարկել է նահանգների կառավարիչներին՝ ժողովել և տեղեկութիւններ հասցնել նահանգներում գոյութիւն ունեցող բոլոր քաղաքական կուսակցութիւնների, դաշնակցութիւնների մասին, մանաւանդ կազմակերպութիւնների անդամների կազմը, ինչպէս և մամուլի գործունէութեան մասին, լինեն դրանք գրաւոր թէ բանաւոր:

Լրագրային լուրերը, որ իբր Հերցենշտէյնի սպանութեան մեղսակցութեան մէջ կասկածվող ժանդարմ Զապօլսկին բանտարկութիւնից արձակված է, սխալ են: Զապօլսկին Վիբօրգի նահանգապետի պաշտօնի թեկնածու է համարվում:

Այսօր բոլոր ծխախոտի գործարաններում աշխատանքները վերսկսվեցին: Բանուորները աշխատանքի կպան նոյնիսկ խոստացած 5% յաւելումն էլ չը ստացած:

Ծովային մինիստրութեան կից կազմված առանձին մասնաժողովը կարծիք է յայտնել՝ կառուցանել նոր տեսակի ռազմիկ խոշոր նաւեր, մեծ ջրառնութեամբ և արագ ընթացքով:

Այդօրինակ նաւերի ամենալաւ տեսակը համարում են սովորական ընդունած ձևը, 2000 տօն ջուր վերցնող և մի ժամում 21 վերստ անցնող: Մտադրվում է բոլոր նաւերը կառուցել ռուսաց նաւաշինարաններում:

Զինավարժութիւնները վերջացան. հետևանքները բարեյաջող են:

Կրօնշտադի ապստամբութեան ժամանակ սպանված կապիտան Դօբրօվօլսկու մարմինը, Բարձրագոյն հրամանով ձրի տեղափոխվում է Պետերբուրգից Եկատերինօսլաւ:

Սվէաբօրգի և Կրօնշտադի անկարգութիւնների պատճառները քննելու համար՝ Բարձրագոյն հրամայված է հաստատել երկու միջվարչական մասնաժողովներ արտակարգ լիազօրութիւններով, Կրօնշտադտում՝ Վօնդար գեներալի նախագահութեամբ, և Սվէաբօրգում՝ գեներալ Գօնչարօվի նախագահութեամբ:

ՎԱՐՇԱՎԱ, 28 յուլիսի: Կատարված կողոպտումի պատճառով ամբողջ ազգաբնակութեան պատասխանատուութեան ենթարկելու համար—ժամանակաւոր գեներալ-նահանգապետի հրատարակված պարտադիր կարգադրութիւնը վերացվում է երկրի գլխաւոր պետի հրամանով:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 յուլիսի: Պաշտօնական: Ներքին գործերի մինիստրը հողային բարեկարգութեան և երկրագործութեան գլխաւոր կառավարչի հետ միասին առանձին հրամանագրեր է ուղարկել, որ վերաբերում են հողային բարեկարգիչ մասնաժողովների գործունէութեանը, որ պիտի կայանայ.—շատ և արագ բաւարարութիւն տալ գիւղացիների յապաղում չը տանող հողային կարիքներին: Մասնաժողովների պարտականութիւններն են լինելու միջնորդի դեր կատարել մասնաւոր սեփականութեան հողերը վաճառողների և գիւղացիների միջև, օգնութեան հասցնել գիւղացիական բանկի հետ յարաբերութիւն մէջ մտնելու ժամանակ, աջակցել տեղափոխման գործին, մասնակցել պետական և հարկատու հողերը կապալով տալուն և բարեացակամ յարաբերութիւններ մտցնել ամենուրեք: Վերջում կարելի կը լինի հեռացնել հողերի մէջ առ մէջ ընկած գրութիւնը (чрезполосность) հողերի ընդհանուր գրաւումը և արտօնեալ իրաւունքները (сервитутъ): Մտադրութիւն կայ զգել ընդարձակ գիւղեր, և բաժանել մէջառմէջ ընկած հողերը և գիւղական ընդարձակ կալուածքները: Բոլոր հանգամանքներում հիմնական կէտ ծառայելու է ինքնակամ համաձայնութիւնը: Հրամանագիրը առաջարկում է—ազգաբնակութեան ծանօթացնել մասնաժողովների նպատակների և խնդիրների հետ: Ներկայ տարում այդօրինակ մասնաժողովներ կազմելու են ոչ ամենուրեք: Միջնորդութիւն է յարուցվելու՝ հիմնել մասնաժողովներ այնտեղ, ուր այդպիսիները չը կան: Գաւառական մասնաժողովներ բացվել են 33 նահանգներում—ընդ. 184 հատ: Իւրաքանչիւր մասնաժողով տարին ծախսում է 47,000 ր.: Իւրաքանչիւր նահանգ ունենալու է 6 երկրաչափներ. ընդամենը լինելու են 180 երկրաչափներ: Ներկայ տարում նահանգական հողային բարեկարգիչ մասնաժողովներ բանալու մտադրութիւն չը կայ: Բոլոր գործերը քննվելու են գաւառական մասնաժողովներում: Հողային բարեկարգիչ մասնաժողովների համար յատկացրած է 800,000 րուբլի:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 յուլիսի: Խուզարկութիւնից, թղթեր և գրքեր կնքելուց յետոյ պրօֆեսիօնալ դաշնակցութիւնների կենտրօնական բիւրօն փակվեց:

Այսօր խուզարկութիւն կատարվեց երկրաչափների և գրասենեակայետ - հաշուապահների դաշնակցութիւնների շինութեան մէջ: Շինութիւնը փակվեց: Կնքված է, նոյնպէս և ժամանակաւորապէս փակված է գործադուլների կոմիտէտի շինութիւնը:

ՄՕՍԿՎԱ, 28 յուլիսի: Հոկտ. 17-ի դաշնակցութեան մասնաժողովը մշակել է նոր ծրագիր—պետական և հասարակական կեանքի բոլոր հարցերի վերաբերմամբ: Մասնաժողովը կողմնակից է առանձին ազգութիւնների իրաւունքներին, բաւարարութիւն տալով նրանց կուլտուրական կարիքներին այն չափով, որով թոյլատրվում են պետական իրաւունքները և միացած ազգութիւնների շահերը. տեղական լայն ինքնավարութիւն—մանր զեմստվոյին միութեան հիմունքներով (широкое мѣстное самоуправленіе на основахъ мелкой земской единицы), դպրոցական գործում մեծ ինքնուրոյնութիւն: Մասնաժողովը կողմնակից է նաև, որ Պետական Դումայի ընտրութիւնները քաղաքներում կատարվեն ուղղակի ձայնատուութեամբ, իսկ գիւղերում՝ երկաստիճան կարգով: Դումային իրաւունք է տրվում—օրէնսդրական նախաձեռնութիւն, միջազգային դաշինքների, մինիստրների պատասխանատուութեան, փոխառութիւնների, հարկերի և պայմանագրերի հարցերի վերաբերեալ քննութիւն: Մասնաժողովը առաջարկում է հաւասարացնել գիւղացիների և միւս դասերի իրաւունքները: Ագրարային հարցի նկատմամբ ընդարձակ գործունէութիւն է առաջարկում հողային բարեկարգիչ մասնաժողովներին և կողմնակից է հողային կարիքների բաւարարելուն—պետական, ուդէլնի և կաբինէտային հողերի հաշուով—գանձարանի մասնակցութեամբ, և այն էլ այն պայմանով, ծախքերը չը վերադարձվեն: Ժողովրդական կրթութեան նկատմամբ ընդունում է ընդհանուր պարտադիր ուսում: Բանուորական հարցի նկատմամբ—աշխատանքի պաշտպանութիւն, համախմբումների և ժողովների ազատութիւն:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՒՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Թիֆլիս, Վօրօնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
Կ. Մ. ՋԻԿՕԽԱՆԻ—9½—10 ժ. ուղեղ. ներքին և նեարդային:
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ և վիրաբուժութիւն:
Զ. Ի. ԲԱՐԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Ի. Կ. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ԿԱՐԱԳԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ՏԻԿ.-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1½-3 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—6—7 ժ. ներքին և երեխայոց և ծաղկախտ.
Ռ. Գ. ԱՐԵԱՆՑ—7—7½ ժ. ներքին և երեխայոց հ.

Վճարը 50 կ. չքաւորները ձրի: Հիւանդների (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԲԺԻՇԿ
Լեւոն Օհանջանեան

Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների: Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.: Կանանց և երեխաների համար 11—12 ժ.: Հասցէն անկիւն Գօլօվինսկի պրօսպէկտի և Կադետսկայեա փողոցի, տուն Թամամշեանի: Մուտքը Կադետսկի փողոցից № 2.

(ա. օ.) 200—300

ՆԿԱՐԻՉ Ա. ՖԷԹՎԱՃԵԱՆԻ
ակվարէլներից ֆաքսիմիլէ պատրաստված
ԱՆԻԻ ՏԵՍԱՐԱՆՆԵՐԻՑ
Գունաւոր ալբօմներ

ստացվել են արտասահմանից և ծախվում են Թիֆլիսում՝ Գուտտենբերգի գրավաճառանոցում, Գնունու և Մարիմի վիմագրական արհեստանոցում, Բաթումում՝ Արմենակ Ֆեթվաճեանի մօտ, Օդեսսայում՝ Զարեհ Սարգսեանի մօտ:

Ալբոմի հատը 1 րուբ. 20 կոպ.:

Անիի պատկերները ծախվում են և իբրև պօստ-կարտեր, բաց նամակներ, զոյգը 15 կոպ., ժանրային պատկերներ՝ հատը 10 կ., հազարով գնողները կը ստանան 20% զեղչ: Պօստի, ծրարման և փոխադրութեան հարկաւորված ծախսերը գնողների հաշուով են:

Արտասահմանում ապրողներին ձեռնտու է դիմել Վիեննա՝ Vienne, Boghos Kürkdjian-ին:

Մի քանի օրից յետոյ լոյս կը տեսնի
ԴԱՍԱԳԻՐՔ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ
II քաղաքական մաս
(Ասիա, Ամերիկա, Աֆրիկա և Աւստրալիա)
Կազմեց Լեւոն Բաբայեան

Մինչև օգոստոսի վերջը պատրաստ կը լինեն և դասագրքի միւս մասերը:

(Կ. Չ.) 4—5

Տպագրվում է և շուտով լոյս կը տեսնէ
Բ. ԻՇԽԱՆԵԱՆԻ
«ՏԱՃԿԱՀԱՅ ԽՆԴԻՐԸ ԵՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՊԼՈՄԱՏԻԱՆ»

(Ամփոփում է իր մէջ «Կեանքի» յօդուածները վերակազմված դրանց և անտիպ մնացած շարունակութիւնը):

Պատուէրների համար կարելի է դիմել «Գուտտենբերգ» գրավաճառանոցը:

(Չ. ու. Կ.) 3—3

Մօտ օրերումս կուղարկվի տպագրական գործերի Թիֆլիսի կոմիտէտին և ապա, ոչ ուշ օգոստոսի 10—15-ից, լոյս կը տեսնի (միայն 480 օրինակով)

ԷՄԻՆ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ ՆՈՐ ՊԻԷՍԸ
ՍՈՒՐ ԵՒ ՀՈՒՐ
(Ո՞վ է մեղաւոր)
էպիզօդներ հինգ արար. եւ ապոթէօզով
1905 թ. հայ-թուրքական ընդհարումներից

Արարուած I—Գիշատիչ թռչուններ. II—Դատապարտելի անհոգութիւն. III—«Շէյթանի» գործերից. IV—Մարմնացած թշնամութիւն. (կանգնել է Իսլամը) և V—Ակն ընդ ական:
Ապոթէօզ:

ԳԻՆՆ Է 1 ՌՈՒԲԼԻ

Միանուագ 10-ից աւելի կանխիկ վճարով գնողներին—20%, 30ից—25% և 50-ից—35% զիջումն է լինելու:

Դիմել միմիայն հեղինակին այսպէս. Эмину Теръ-Григорянцу. (Հ. Կ.) 2—15

Լոյս տեսաւ և վաճառվում է
Ա. ՋԱՆԵԱՆԻ
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ
I պրակ. գինն է 8 կոպ.

Դիմել հայ գրավաճառներին:

5—10

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ
Ռուսերէնից Հայերէն
Յ. ԴԱՂԲԱՇԵԱՆԻ

Գինն է 8 ր., փառակազմ 9 ր., ճանապարհածախսով 10 ր., հեղինակին դիմողները ճանապարհածախս չեն վճարում: Լիակատար բառարան հայերէնից ռուսերէն: Բաժանորդագինն է 5 ր., առաջին բառարանիս բաժանորդների համար 4 ր.: Գրպանի բառարան ռուսերէնից հայերէն: Բաժանորդագինն է 2 ր. 50 կ.:

Դիմել ուղղակի հեղինակին հետևեալ պարզ հասցէով՝ Тифлисъ, лексикографу А. Дагбашяну. Անձամբ հեղինակի հետ տեսնվել կարելի է առաւօտեան ժամերին (Барятинская ул. № 6 кв. Германа).

(Կ. Ե. Հ.) 6—5

ՀՐԱՒԷՐ

Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի սրբատառ կոնդակի և Նորին բարձր սրբազնութեան թեմակալ առաջնորդի առաջադրութեան համաձայն Բեթղեհէմի ս. Աստուածածին եկեղեցու ծխականները երկրորդ եւ վերջին անգամ հրաւիրվում են, կիրակի, յուլիսի 30-ին, առաւօտեան ժամը 10-ին, Բեթղեհէմի եկեղեցին՝ ընտրելու չորս պատգամաւոր, որոնք Վանքի և Մողնու եկեղեցիների պատգամաւորների հետ միասին պիտի ընտրեն Մարիամեան-Յովնանեան օրիորդաց դպրոցի համար չորս հոգաբարձու: Այս անգամ էս ծխականներին առանձին հրաւիրաթերթեր չեն ուղարկվում:

Գէորգ քահ. Մեհրաբեանց

(Չ. Կ.) 2—2

ՀՐԱՒԷՐ

Հաւլաբարի ԷՋՄԻԱԾՆԵՑՈՑ Ս. ԳԷՈՐԳ եկեղեցու յարդելի ծխականները և նոյն եկեղեցու դպրոցում սովորող ոչ ծխական աշակերտուհիների ծնողները ՀՐԱՒԻՐՎՈՒՄ ԵՆ ԺՈՂՈՎԻ կիրակի, ամսիս 30-ին, առաւօտեան 10 ժամին խորհրդակցելու դպրոցի ապագայի մասին:

Հոգաբարձութիւն

(Ու. Չ. Կ.) 3—3

ՀՐԱՒԷՐ
(երկրորդ անգամ)

Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի սրբատառ կոնդակների և թեմիս բարձր առաջնորդի առաջադրութեան համաձայն՝ Հաւլաբարի հայոց սուրբ Կարապետ եկեղեցու 21 և աւելի տարեկան հասակ առած երկու սեռի ծխականները հրաւիրվում են նոյն եկեղեցի, ամսիս 30-ին, կիրակի, ժամը 10-ին, երեք պատուիրակ ընտրելու՝ ռուսահայոց առաջին եկեղեցական կենտրոնական ժողովի համար չորս պատգամաւորների ընտրութեանը մասնակցելու:

Գաբրիէլ աւագ քահ. Տէր-Գաբրիէլեանց

Ու. Չ. Կ. 3—3

ՀՐԱՒԷՐ

Մողնու ս. Գէորգ եկեղեցու ծխականները հրաւիրվում են հինգշաբթի, յուլիսի 27-ին, երեկոյեան ժամը 6-ին, Մողնու եկեղեցի՝ ընտրելու չորս պատուիրակներ, որոնք վանքի և Բեթղեհէմի եկեղեցիների պատուիրակների հետ միասին պիտի ընտրեն Մարիամեան-Յովնանեան դպրոցի համար չորս հոգաբարձուներ:

Ծխականների օրինական թիւ չը լինելու դէպքում երկրորդ և վերջնական ժողովը կայանալու է կիրակի, յուլիսի 30-ին, առաւօտեան ժամը 12-ին:

Այլ և հրաւիրվում են կիրակի, ամսիս 30-ին, առաւօտեան ժամը 12-ին, երկրորդ և վերջնական ժողովի՝ ընտրելու էջմիածնի կենտրոնական ժողովի համար երեք պատուիրակներ:

Սիմէօն աւագ քահ. Չմշկեանց

(Ե. Կ.) 2—2

Պահանջեցէք ամեն տեղ «ՕԴՕԲՐԻՆ»
Միայն Միխայիլ Լեբեդևի
„Этикетъ утвержденъ прав.“ մակագրութեամբ

Գլխաւոր պահեստատեղին դեղագործական ապրանքների վաճառման Կովկասեան ընկերութեան մէջ—Թիֆլիս, Բագու, Բաթում:

10, 20, 30 10—40

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԳԻՐՔ
Գ. Ալթունեանի. ծխական դպրոցների համար.
ԳԻՆՆ Է 60 ԿՈՊ.

Դիմել՝ Էջմիածնի Ճեմարանի քարտուղար, պ. Քոչարեանին և Ալէքսանդրոպօլ հեղինակին: 5—10

„ՆՈՄԵՐԱ ՑԵՆՏՐԱԼ“

մականունով: Գները 70 կոպէկից մինչև 2 րուբլի: Ամսական ցանկացողների հետ առանձին պայմաններով:

Գանձակում տեղի ունեցած ընդհարումների պատճառով ես տեղափոխեցի իմ կենտրոնական ՀԻՒՐԱՆՈՑՍ շքեղ կահկարասիներով Թիֆլիս, Պուշկինսկի փողոցի վրա № 23, պրավօսլաւիի հոգևոր սեմինարիայի դիմաց

Ալէքսանդր Ցարութինով

(Հ. Կ. Ե.) 41—100

„Վերսալ“ հիւրանոց

„ՎԵՐՍԱԼ“
[ՀԻՒՐԱՆՈՑ]
Քաղաքի ամենակենտրօնական մասում
Վօրօնցովի արձանի մօտ,

ուր շարունակվում են տրամվայի բոլոր գծերը: Համարները սկսած 1 րուբլուց և աւելի: Ցարմար կերպով կահաւորված համարներ՝ բոլոր յարմարութիւններով: Բաղնիք, դուշ, տէլէֆօն, էլէքտրական լուսաւորութիւն ընդհանուր շինութեան մէջ: Օդի և լոյսի առատութիւն: Կատարեալ մաքրութիւն և կարգապահութիւն: Խնդրում ենք չը լսել կառապաններին, երբ թէ ազատ համար չը կայ և այլն:

(Կ. Ե. Հ.) 4—24

„Վերսալ“ հիւրանոց

ԵՐԿԱԹՈՒՂԻ
(Ամառային գնացքների երթևեկութիւնը)
(Ժամերը հաշուած են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի միջինը Թիֆլիսի ժամանակով).

	Պոստային	Մարդատար.	Արագ.	Ապրանք.
Բագուից դուրս գալը	4 ժ. 53 ր. ցեր.	11 ժ. 03 ր. ցեր.	12 ժ, 20 ր. գիշ.	4 ժ. 03 ր. գի
Թիֆլիս հասնելը	11 » 26 » »	5 ժ. 25 ր. առ.	1 ժ. 30 ր. գիշ.	9 ժ. 37 ր. երեկ.
Թիֆլիսից դուրս գնալը	12 » 23 » »	6 ժ. 01 ր. առ.	—	—
Թիֆլիսի ժամանակով)	1 » 24 » »	6 ժ. 59 ր. առ.	—	—
Բաթում հասնելը	1 » 38 ր. գիշ.	7 ժ. 07 ր. եր.	—	—
Բաթումից դուրս գալը	5 » 22 » »	5 ժ. 24 ր. ցեր.	—	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. եր.	6 ժ. 39 ր. առ.	—	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 58 » »	7 ժ. 37 ր. առ.	5 ժ. 35 ր. ցեր.	10 ժ. 40 ր. գի
(Թիֆլիսի ժամանակով)	7 » 56 » »	8 ժ. 35 ր. առ.	6 ժ. 33 ր. ցեր.	11 ժ. 38 ր. գի
Բագու հասնելը	1 » 20 ր. ցեր.	12 ժ. 42 ր. գիշ.	6 ժ. 19 ր. առ.	3 ժ. 55 ր. ցե
Երևանից դուրս գալը	12 » 02 » »	—	—	11 ժ. 26 ր. գի
Կարսից » »	3 » 57 » »	—	—	3 ժ. 15 ր. գի
Ալէքսանդրոպոլից դուրս գալը	7 » 38 » եր.	—	—	7 ժ. 06 ր. ա
Թիֆլիս հասնելը	5 » 06 » առ.	—	—	4 ժ. 49 ր. ցե
Թիֆլիսից դուրս գալը	11 » 12 » գիշ.	—	—	3 ժ. 25 ր. ցեր.
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 10 » »	—	—	4 ժ. 23 ր. ցեր.
Ալէքսանդրոպոլից դուրս գալը	10 » 30 » առ.	—	—	2 ժ. 47 ր. գի
Երևան հասնելը	1 » 55 » ցեր.	—	—	6 ժ. 10 ր. գի
Կարս հասնելը	4 » 23 » »	—	—	8 ժ. 48 ր. առ.

Առևտրի եւ արդիւնաբերութեան մինիստրութեան տնօրինութեան ներքոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՈՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐ
(Թիֆլիս, Միքայէլեան պրօսպ. տուն № 24/4.)

Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն: Դասընթացքը աւարտողներին տրվում են ատտեստատներ: Առարկաներն են. 1) առևտրական տնտեսութիւն (քաղաքական տնտեսութիւն). 2) հաշուապահութիւն (պարզ, իտալական, բանկային և գործարանային). 3) առևտրական թուաբանութիւն. 4) կանօնագրութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանօնագրութիւն.) 5) առևտրական թղթակցութիւն 6) թուաբանութիւն համրիչի վրա. 7) վայելչագրութիւն, արագագրութիւն (ամենավատ ձեռքի ուղղել): Առարկաները ուսուցանվում են Վիեննայի առևտրական ակադեմիայի ծրագրով: Ամբողջ տարվայ վճարն է 60 ր.: Կուրսերին կից բացվում են

ԿՈՒՐՍԵՐ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ
(Գերմաներէն, Ֆրանսերէն եւ Անգլերէն)

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից: Խնդիրների ընդունելութիւնը օգոստոսի 1-ից ամենայն օր երեկոյեան 4—7 ժամը: Ծրագիրը և կանօնները ուղարկվում են և տրվում են ձրիապէս կուրսերի հիմնողի բնակարանում

2—10 Առևտրական գիտութիւնների կանդիդատ Տ. Մ. ՓԻԼՈՅԵԱՆ

ՀԱՍԿԵՐ
№ 7. Յուլիս 1906 թիւ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. ԴԷՀ, ՓԱԽԻՐ, պատկեր.
2. Ո՞ՒՄԸ ԿԸ ՀԱՍՆԻ, Սաղաթեանի
3. ՀԵՂԻԿԻ ՏԻԿՆԻԿԸ, տիկ. Բաղիկի
4. ՀՐԱՒԷՐ ոտանաւոր, Պ. Սարբեկեանի
5. ՁԱՐԹՆԵՑ, Գէորգ Բ. Մկրտումեանցի.
6. ՄՐՋԻՒՆՆԵՐ, Մակար Տէր-Սարգսեանցի.
7. ՆԱԲԷԿԻ ՆԺՈՅԳԸ արաբական աւանդութիւն
8. ԴԵՐԻԿ ԿԱՄ ԴԷՊԻ ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆ, ուխտագնացութիւն—Սէյրի
9. ՀԱՅՐԵՆԻ ԱՌԱՍՊԵԼՆԵՐԻՑ ԵՒ ՎԷՊԵՐԻՑ. Արտաշէս և Արտաւազդ
   Ստ. Լիսիցեանի.
10. ԿԵԱՆՔԻ ՕՐԷՆՔՆԵՐԸ, Արնօլդ-Ֆօրստերի
11. ՋԻԱՐՃԱԼԻՔ

ՆԿԱՐՆԵՐ. պ. պ. Ախիկեանի, Թեոդեմեզեանի եւ Օ. Շմերլինգի:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՅԱՒԵԼՈՒԱԾԸ կուղարկվի օգոստոսի №-ի հետ ոչ թէ առանձին թերթերով, այլ ամբողջացրած գրքոյկով (մօտ 70 երես):

Ֆինանսների նախարարութեան իրաւասութեան տակ գտնվող
ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ

Հեղինակ «Առևտրական, գործարանական և նաւթարդիւնաբերութեան հաշուապահութեան ձեռնարկի», որ ֆինանսների նախարարութեան ուսումնասիրական բաժնի կողմից ընդունված է իբրև օժանդակ ձեռնարկ առևտրական դպրոցներում և նրանց գրադարաններում:

ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ

Երկու սեռի անձանց՝ գործնական ձևով հաշուապահութիւն 4 ամսում:

Ներկայ տարվայ կուրսերում բացի սովորական մասնագիտական առարկաներից աւանդվելու է ձրիաբար քաղաքական տնտեսութիւն (политическая экономія) և որոշ վճարով կամաւոր սղագրութիւն (стенографія):

Ընդունելութիւնն ամեն օր ժամը 5-ից մինչև 7-ը երեկոյեան և 9-ից մինչև 11-ը առաւօտեան: Պարապմունքները սկսվելու են սեպտեմբերի 15-ից, պարբերական ամեն 4 ամիս, ամենայն օր ճաշից յետոյ: Ծրագիրն ուղարկվում է ձրի:

Դասընթացը աւարտողներին տրվում են ֆինանսների նախարարութեան թոյլատրված ծրագրի համաձայն, ատտեստատներ:

Դրանից անկախ, բացված է քիչ պատրաստութիւն ունեցող անձերի համար առանձին լրացուցիչ և կրկնողութեան կուրսեր ռուսաց լեզուի և թուաբանութեան համար:

Ցանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին Թիֆլիսում Н. В. Абраамяну, Николаевская ул. № 22, ամենայն օր:

Վերևում յիշած ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում: Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու. Գինն է 3 ր. 50 կոպէկ: (Հ. Կ. Ե.) 7—20

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ
(Тифлисъ, Сололакъ, Лермонтовская ул. № 15)

Առևտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ: Աւարտողները ստանում են ատտեստատներ:

Աւանդելի առարկաները սրանք են՝ 1) Առևտրական Տնտեսութիւն. 2) Առևտրական Թուաբանութիւն. 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային). 4) Թուաբանութիւն համրիչի վրա. 5) Առևտրական Թղթակցութիւն. 6) Առևտրական և մուրհակի կանօնագրութիւն և 7) Գեղագրութիւն, վատ ձեռքի ուղղելը:

Ձրի ուսուցումն ցանկացողներին գրող մեքենայի վրա: Պարապմունքները կուրսերում լինում են ամեն օր:

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից: Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից: Ամենայն օր, առաւօտեան ժամը 10-ից մինչև 12-ը, և երեկոյեան 4-ից մինչև 6 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլօլակում, Ալէքսանդր Փրիդօնօվի տանը № 9, Սերգիևսկայա և Լերմօնտօվսկայա փողոցների անկիւնում: Ծրագիրը և կանօնները կարելի է ստանալ ձրիապէս կուրսեր հիմնողի բնակարանում: Օտարաքաղաքացիք դիմում են՝ С. П. Мануэльянцу. (Կ. Չ.) 8—25

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ
դասագիրք ստորին դասարանների համար
յօրինեց **Մ. ԱԲԵՂԵԱՆ**, ուսուցիչ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ Գ. ՃԵՄԱՐԱՆԻ
ԳԻՆՆ Է 75 ԿՈՊԷԿ

Հեղինակից գումարով (առնուազն 20 օրինակ) գնողների համար 60 կոպէկ: Հեղինակի հասցէն՝ Эчміадзинъ, Академія, Мануку Абегянъ: Կարելի է դիմել նաև Թիֆլիսի գրավաճառներին և Արտաշէս Աբեղեանին, «Ալիքի» խմբագրութիւն:

(Ու. Կ. Հ. Կ. Չ.) 2—5

Տպարան «ՀԵՐՄԷՍ» ընկ.

Электропечатня типографскаго Т—ва «Гермесъ» Мадат. ул. № 5